№ 20 ԿԻՐԱԿԻ, 27 ՅՈՒՆՎԱՐԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 27 ՅՈՒՆՎԱՐԻ № 20

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak“

Խմբագրատան տէլէֆօն № 2—58.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տէլէֆօն № 67.

Ցակոբ, Սօֆիա և Սօֆիա Մանուէլեանցները, Հայկանդուխտ և Գարեգին Մելիք-Մարութեանցները խորին վշտով յայտնում են՝ առաջինն ու երկրորդը իրանց խանդաղին որդու, երրորդն իր եղբօր-որդու, չորրորդն իր սիրելի եղբօր, իսկ հինգերորդը իր աներոջ-որդու՝

Երուանդ Յակոբեան ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

մահը։ Մարմնի յուղարկաւորութիւնը այսօր, կիրակի, յունվարի 27-ին, առաւօտեան ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանից (Վելեամինովսկայա փ. 22) դէպի Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 60. 2—2

Ստեփան Մկրտչեան Եարղուլեանցը խորին վշտով յայտնում է իր բարեկամի և թանգագին ու անմոռանալի գործակատարի

ԵՐՈՒԱՆԴ ՅԱԿՈԲԵԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

մահը։ Մարմնի յուղարկաւորութիւնը այսօր, կիրակի, յունվարի 27-ին, առաւօտեան ժամը 10-ին, հանգուցեալի բնակարանից (Վելեամինովսկայա փ. 22) դէպի Նորաշէնի ս. Աստուածածին եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 61. 2—2

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՅՈՒՆՎԱՐԻ 28-ԻՆ

Բենեֆիս Յ. Աբելեանի

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ
ԲԱՐԵՀԱՃ ՌԵԺԻՍՍՕՐՈՒԹԵԱՄԲ
ՌՈՒՍԱՑ ՉԱՐԵՋՆԻԻ ԴՐԱՄԱՏԻԿ ԽՄԲԻ ՌԵԺԻՍՍՕՐ Ա. ՏՈՒԳԱՆՈՎԻ
Կը ներկայացնէ առաջին անգամ հայ բեմի վրա ԱԼ. ՏՕԼՍՏՕՅԻ յայտնի ողբերգութիւն

ԻՕԱՆՆ ԱՀԵՂԻ ՄԱՀԸ

5 արարուածով, թարգմ. Տիգ. Յովհաննիսեանի։
Թարգմանութիւնը արժանացած է Դրամատիկ. Ընկ. ժիւրիի մրցանակին
◆ Մասնակցում է ամբողջ խումբը։ ◆
Սկիզբը երեկոյեան ժամը 8-ին:
◆ Տեղերի գները բենեֆիսային են։ ◆
62. 2—2

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Այսօր, կիրակի, ցերեկվայ ճիշդ ժամը 12-ին
ԱՐՇԱԿ ՋԱՄԱԼԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԸ
ԿԸ ԴԱՍԱԽՕՍԷ

ՇԱՆԹԸ ԵՒ ԻՐ „ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐԸ“

ՆԻՒԹԻ ՄԱՍԻՆ։
Տոմսակները և ծրագիրը կարելի է ստանալ դահլիճի մուտքի առաջ։
66. 1—1

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

կիրակի, փետրվարի 3-ին, ցերեկվայ ժամը 11-ին, Կովկասի Հայոց Բարեգ. Ընկ. դահլիճում (Աբաս-Աբադեան հրապ. № 7) նշանակված է

ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ՕՐԱԿԱՐԳՆ է՝ 1) 1913 թ. նախահաշւի քննութիւն և հաստատում, 2) Վարչութեան զեկուցումը 1913 թ. ընդհանուր գործունէութեան ծրագրի մասին, 3) Պ. Օ. Ղուկասեանի մանկական գրքերի համար նուիրաբերած 3000 ր. գումարով հրատարակելիք գրքերի համար յատուկ խմբագրական մասնաժողովի ընտրութիւն, 4) Վարչութեան զեկուցումը խմբագրական մասնաժողովի նախագահ Գիւտ աւ. քահ. Աղանեանի յօգուտ Ընկերութեանս կատարած երկրորդ ճանապարհորդութեան մասին, 5) Վարչութեան զեկուցումը Վլադիկավկազում ճիւղ բաց անելու մասին, 6) Վերստուգիչ յանձնաժողովի մէկ անդամի ընտրութիւն և 7) Հերթական խնդիրներ։

Ծանօթ.—Եթէ առաջին ժողովը անդամների օրինական թւի բացակայութեան պատճառով չը կայանայ, երկրորդը հրաւիրվում է փետրվարի 10-ին, նոյն տեղում և նոյն ժամին։
(կ.) առ. 64. 2—1

ԾԽԱԽՈՏ
15 հատը
6 կոպէկ:
ծխախոտա-գործարան
„ՄԻՐ“
(կ. չ. ու.)

Անիի մէջնաբեր [illegible]

Փորձեցէք ծխել „ԱՆԻ“



Պահանջեցէք անպայման ԱՄԵՆ ՏԵՂ:
առ.

[illegible]

ԾԽԱԽՈՏ
25 հատը
10 կոպէկ:
ծխախոտա-գործարան
„ՄԻՐ“
936. 50—19

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Կիրակի, յունվարի 27-ին, կը կայանայ
ԵՐԿՐՈՐԴ և ՎԵՐՋԻՆ

ՀԱՄԵՐԳԸ

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԿՕՆՍԵՐՎԱՏՕՐԻԱՅԻ ՊՐՕՖԵՍՍՕՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՆԱԼԲԱՆԴԵԱՆԻ

Սկիզբն է երեկոյեան ժամը 8½-ին:
Տոմսակները վաճառվում են պ. Սուզանաճեանի մուզիկ. խանութում, իսկ համերգի օրը՝ առ. ժ. 10—2-ը և եր. ժ. 6-ից դահլիճի մուտքի մօտ։
ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱՖԻՇԱՆԵՐՈՒՄ ԵՒ ՊՐՕԳՐԱՄՆԵՐՈՒՄ։
(հ.չ.կ.) առ. 53. 4—4

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ի յիշատակ հայ գրերի 1500-ամեակի և հայկական տպագրութեան 400-ամեակի
ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ Է

Հայերէն հրատարակութիւնների ցուցահանդէս

որ պէտք է բացվի Թիֆլիսում 1913 թ. հոկտ. 6-ին և տևելու է մինչև նոյն ամսի 12-ը։

Ուստի խորհուրդը խնդրում է պ. պ. հեղինակներին, հրատարակիչներին, տպարանատէրերին և ամեն մի հայի՝ ուղարկել Ընկերութեանս հայերէն ամեն տեսակ հրատարակութիւններ, հայկական վիմատիպ պատկերներ և քարտէզներ։

[illegible] Ընկ. [illegible], և կամ դրամով ձեռք կը բերվեն, ցուցահանդէսից յետոյ պիտի պահվեն [illegible] յուշարձան հայ գրերի և տպագրութեան, իսկ սոսկ ցուցադրվելու նպատակով ստացվածները կը վերադարձվեն տէրերին։

Ամեն ինչ պէտք է ուղարկել այս հասցէով. Армянскому Этнографическому Обществу. Тифлисъ.
Խորհրդի նախագահ՝ Ս. Մելիք-Ազարեան
Անդամ-քարտուղար՝ Ե. Լալայեան
(կ.) 65. 10—1

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Րտիշչէվսկայա 13, տէլէֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանացի և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից), վաղօրօք գրվելու պայմանով։

Ընդունելութիւն կանացի, ներքին և մանկական հիւանդութիւն ունեցող երթեւեկ հիւանդների, ամեն օր՝ ցեր. ժամը 11-ից մինչև 12-ը։

Ընդունելութիւն պրոֆ. Մ. Ս. Սուբբոտինի կողմից վիրաբուժ. կարիք ունեցող հիւանդների, վաղօրօք գրվելու պայմանով, երկուշաբթի և հինգշաբթի օրերը ցեր. ժամը 1—2-ը։

Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութինեան, Ն. Ն. Վեսելովզորով, Վ. Ա. Զակրժեվսկի, Ի. Գ. Կալամկարեան, Ա. Ա. Նովիցկիյ, Գ. Ն. Տէր-Ներսէսեան, Ն. Զ. Ռամիկեան, Ա. Ր. Փիշէր, Ս. Պ. Շահպարոնեանց։ Կօնսուլտանտ՝ պրօֆեսսօր Մ. Ս. Սուբբոտին։
(հ.կ.) առ. 779. 100—26

ԲԺԻՇԿ
Յ. Մելիք-Նուբարեան
ներքին և երեխաների հիւանդութիւնների, առանձնապէս թոքերի։
Թոքախտի բժշկութիւնը տուբերկուլիններով և պնեվմատօրակսով։
Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Ամեն օր (առաւօտեան 12—1 ժ.
(երեկոյեան 5—7 ժ.
Սօլօլակ, Րտիշչեվսկայա 10 (Լերմոնտովսկ. դեղատան դիմացը)։
(ե. հ. կ.) առ. 746. 100—48

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրօֆ. Mathieu-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզից
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11-ը։
(երեկ. ժ. 5—7-ը։
Միխայլովսկի պր. 86, տէլէֆ. № 576.
(ե.հ.կ.) առ. 179. 100—84

ԿՈՎԿԱՍԵԱՆ
ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐ
Առ. և Ա.Մ.
Պահանջեցէք ամենուրեք!
ԲՈՒԺԻՉ „ՆԱՐԶԱՆ“ Սեղանատան „ԷՍՍԷՆՏՈՒԿԻ № 20.“
ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ (աղի-ալկալեան) №№ 4, 4 նոր, 6, 17, 18, 18 բիւվ. 2, 19, ԲԱՏԱԼԻՆԵԱՆ (անփոխարինելի լուծողական)։ ՍՄԻՐՆՈՎԵԱՆ-ԵՐԿԱԹԱՅԻՆ (պարունակում է մկնդեղ)։ ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ ԼԷՊԵՇԿԱՆԵՐ (վերացնում է տապը)։ ԷՍՍԵՆՏՈՒԿԵԱՆ ԱՂ (փոխարինում է № 17 ջրին)։
ՋՐԵՐԻ ԵՒ ՄԹԵՐՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԵՍՏԻՆ—ТИФЛИСЪ, Михайловская ул., д. Зубарева.
Գլխաւոր պահեստը Վարչութեան կից՝ Պեատիգորսկում։ Պրէյս-կուրանները ձրի։
Դիմել՝ Пятигорскъ, Управленіе водъ.
(կ.) առ. 224. 39—37

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Օգնական Prof. Posner-ի
Ընդունում է միզասեռական (վեներական) հիւանդներին Բեռլինի իր խորհրդակցական կաբինէտի և պրոֆ. Պօզնէրի կլինիկայի մէջ։ Տալիս է նաև խորհուրդներ միւս մասնագիտութիւնների վերաբերեալ։
Հասցէն՝ D-r Muradoff Berlin. Iohannisstr. 15 (an der Friedrichstrasse). Telefon amt Norden 113—19.
(կ.) առ. 830. 0—8

ԲԺԻՇԿ
ՇՈՒՇԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ
Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը։
Հասցէն՝ Րտիշչէվսկայա № 1.
առ. (կ. ե. հ.) 4. 100—10

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՎԵՐՋԻՆ ՃԻԳԵՐԸ

Պատերազմը վերսկսված է և շարունակվում է։

Հեռագիրները լուրեր են բերում թէ բուլղարական և թէ թիւրքական զէնքերի աջողութեան մասին։

Քաղաքական խնդիրներով զբաղվողները գուշակութիւններ են անում սպասվելիք դրութիւնների մասին։

—Պատերազմը երկար չի շարունակվի,—ասաց անգլիական մամուլը։

—Պատերազմը ցոյց կը տայ, որ թիւրքական զօրքը դեռ ևս չէ կորցրել իր ույժը,—յայտնեցին գերմանական լրագիրներից մի քանիսը։

—Պատերազմը կը վերջանայ նրանով, որ հրապարակի վրա կը դրվի նաև Ասիական Թիւրքիայի բարեկարգութեան խնդիրը,—ասաց ֆրանսիական մամուլի մի նշանաւոր մասը։

Ներկայ պատերազմը տարօրինակ մի երևոյթ է, շատ բնորոշ, սակայն, մեր ժամանակի համար։ Դա միջազգային տարտամ քաղաքականութեան արտայայտութիւններից մէկն է, որը կարող է նոր տարօրինակութիւններ հանդէս բերել։

Արդարև՝ մենք ամբողջ շաբաթներ է, ինչ լսում էինք եւրոպական համերգի մասին։

—Համերաշխութիւն, համաձայնութիւն է տիրում բոլոր պետութիւնների մէջ,—ասում էին ամենուրեք։

Իսկ ինչ դուրս եկաւ իրականութեան մէջ։

Բոլորովին հակառակը։

Դուրս եկաւ, որ եւրոպական պետութիւնները զանազան տեսակ ազդեցութիւններ էին գործադրում Բոսֆորի ափերում։ Գերմանիան խրախուսում է եղել երիտասարդ-թիւրքերին դէպի անհամաձայնութիւն Քեամիլ-փաշայի քաղաքականութիւնը, ուրիշ խօսքով՝ դէպի Լոնդոնի հաշտութեան խորհրդակցութիւնների որոշումները։

Չաթալջայի, Գալիպոլիի, Բողոստոյի և Ադրիանուպոլսի շրջաններում ներկայումս պատերազմում են ոչ միայն օսմանցիները և բալկանեան քրիստոնեաները, այլ և եւրոպական պետութիւնները միմեանց դէմ։

Եւ պատերազմի աջող կամ անաջող ելքը միատեսակ չէ ընդունվում եւրոպական պետութիւնների կողմից։ Այն ժամանակ, երբ այս ու այն կռւող կողմի յաղթութիւնը ուրախացնում է պետութիւններից մէկին, նա տխրութիւն է միւսի համար։

Եւրոպական անհամաձայնութիւն—ահա քաղաքական դժբաղդութիւնների մի խոշոր պատճառը օսմանեան հողերի վրա, որը վնասեց նախ քրիստոնեայ ազգութիւններին, իսկ վերջ ի վերջոյ և իրան թիւրքական տարրին և ամբողջ օսմանեան պետութեան։

Եւրոպական անհամաձայնութիւնը այն առանցքն է, որի շուրջը պտտում էր Բարձր. Դրան քաղաքականութիւնը։

Եւ Բոսֆորի ափերում նստած քաղաքագէտները միշտ էլ օգտվում էին եւրոպական անհամաձայնութիւնից՝ խուսափողանց լինելու իրանց պարտականութիւնների վերաբերութեամբ և եւրոպացիներին և թէ իրանց,—հասցնելով իրանց երկիրը ներկայ ճգնաժամային վիճակին։

Թիւրքիան ձգձգում և յետաձգում էր իր մէջ ապրող ազգերի բարգաւաճման նպաստող ռէֆօրմների ներմուծումը՝ յենվելով այսօր մի, վաղը մի ուրիշ պետութեան վրա, բայց և զիջելով հանապազօրէն այս ու այն արտօնութիւնը աջակից պետութեան օգտին։

Շարունակ 35 տարի նա ծախում էր իր իրաւունքները սարսափելի գնով, որի իսկական բնաւորութիւնը և արժէքը նա այսօր է տեսնում՝ հասած իր քայքայման վիճակին։

Եթէ նոյն իսկ այժմ պատերազմի դաշտում Թիւրքիան ունենայ մի քանի յաղթութիւններ և կարողանայ յետ կորզել Ադրիանուպոլիսը, բայց միայն նոյն Թիւրքիան, ինչ որ եղել է մինչև այժմ, չը կայ նրա համար փրկութիւն։

Իսկ պատերազմը հեշտ պատերազմներից չէ։ Նա պէտք է տեղի ունենայ մի շրջավայրում, ուր ազգաբնակութիւնը չէ համակրում արշաւող զօրքերին և չի աջակցի նրա առաջխաղացութեանը։ Չը պէտք է մոռանալ, որ պատերազմը տեղի ունի ձմեռվայ ամիսներում, երբ զօրքը անկարող է մնալ բացօթեայ և կարօտ է աւելի մեծ խնամքի, քան ամառվայ ամիսներում։

Թիւրքական աղբիւրները լաւատես գուշակութիւններ են անում առաջիկայ պատերազմական գործողութիւնների մասին և հաւատում են, որ օսմանեան զէնքը ցոյց կը տայ իր ույժը։ Գուցէ և լինեն այդպիսի դէպքեր։ Բայց օսմանեան դատը արդէն կորցված է։ Օսմանեան պետութիւնը այլ ևս չէ կարող վերադարձնել անցեալը։

Եթէ օսմանեան պետութիւնը ունի ասելու աշխարհին մի այնպիսի բան, որ լուրջ ուշադրութեան և յարգանքի արժանի լինէր, դա այն կը լինէր, եթէ նա գոնէ այսուհետև իր փոքրիկ սահմաններում թօթափէր իրանից միջնադարեան ոգին և արմատական կերպով ոտք դնէր եւրոպական քաղաքակրթութեան հողի վրա, տալով ազատ և բարեկարգ կեանք իր հպատակներին։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

25 յունվարի

Ցարսկոյէ-Սէլօ.—Ալեքսանդրեան պալատում Բարձրագոյն ներկայութեամբ կայացաւ դաշտ. նախաճաշ ի պատիւ մեկնող իտալական դեսպան Մելեգարիի։

—

Բեռլին.—Ռէյխստագի բիւջէտային մասնաժողովի մէջ ծովային մինիստրը յայտնեց, որ Գերմանիայի ծովային սպառազինումը կրում է բացառապէս պաշտպանողական բնաւորութիւն. ան[illegible] մինիստրը կողջունէր անգլօ-գերմանական համաձայնութիւնը, որպիսին [illegible] սահմանափակէր ռազմի նաւատորմիղները։

Լոնդոն.—Յայտնի գիտնական Վիլիամ Ռամզէյը քիմիական ընկերութեան մէջ զեկուցեց, որ նրան աջողվեց փորձով էլեկտրականութեան միջոցով ջրածինը բաժանել երկու տարրի—նէօն և գէլլի։ Գիտական աշխարհը ահագին նշանակութիւն է տալիս այս նոր գիւտին։ Ռամզէյի հետ աշխատում էին պրոֆէսօրներ Կոլլէն և Պատէրսոնը։

Տօկիօ.—Կիուսիուսյում քարածխային հանքերում տեղի ունեցած պայթումից սպանվել են 92 մարդ։

Կազմակերպվեց սօցիալիստական կուսակցութիւն, որ ձգտելու է իրականացնելու ընդհանուր պարլամենտական աշխատանքները։

Վիեննա.—Գալիցիայի ֆինանսական դրութիւնը դառնում է կրիտիկական։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ՎԵՐՍԿՍՎԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

25 յունվարի

Կ. Պոլիս.—Գալլիպոլիի մօտ կռիւը շարունակվում է։ Երկուստեք խոշոր կորուստներ են։ Թիւրքերը վերստին գրաւեցին Կավակ-սուն Գալլիպոլիի մօտ։

Յետս եկաւ նաւատորմի մի մասը։ Նաւերից մի քանիսը մտան Սև ծովը։ Լուրերի համաձայն թիւրքական շոգենաւերը Միդիայում մի քանի հազար զինված քիւրդեր են ափ իջեցրել, որոնք իբր թէ բաժանվել են մանր խմբերի պարտիզանական պատերազմ սկսելու համար։

Ազգային ինքնապաշտպանութեան կոմիտէտը վաճառականների միջև բաժանեց պետական գանձատան վկայականներ իւրաքանչիւրը 25 ֆրանկ արժողութեամբ։ Կոմիտէտը դիմեց Եգիպտոս և Հնդկաստան խնդրելով դրամական օգնութիւն։ Շատերը համաձայնվում են գնել արքունի հողաբաժինները։

Լուր տարածվեց, թէ Գալլիպոլիի մօտ կռիւը վերջացել է թիւրքերի խոշոր պարտութեամբ։ Նրանց կորուստներն են 5000 մարդ։ Կառավարութիւնը ճնշված է և սկսում է պատրաստել հասարակական կարծիքը այս [illegible]

Լոնդոն.—Ռէյտէրի տեղեկութիւնների համաձայն դեսպանների խորհրդակցութիւնը Ալբանիայի սահմանների հարցի առիթով գտել է, որ մի քանի հարցեր անհրաժեշտ է լուծել տեղում, ուստի և գուցէ թէ հաստատվի միջազգային մասնաժողով հարցը տեղում քննելու համար։

Սօֆիա.—Վերադարձաւ Դանէվը, ընդունվեց ունկնդրութեան Ֆէրդինանդ թագաւորից, ներկայ գտնվեց մինիստրների խորհրդի նիստում, ուր զեկուցեց Լոնդոնի հաշտութեան բանակցութիւններին վերաբերեալ հարցերի մասին։

Մեծ պետութիւնների դեսպաններից մի քանիսը տեղեկացրին Գէշօվին, թէ Ադրիանուպոլսի հիւպատոսները խնդրում են նշանակել չէզոք շրջան կամ թոյլ տալ նրանց և արտասահմանեան գաղութներին հեռանալ քաղաքից։ Գէշօվը պատասխանեց, որ դէպքեր չեն եղել, որպէսզի հիւպատոսները կամ այլ անձինք մեկնած լինեն պաշարված տեղերից. միւս կողմից լուրջ պատճառաբանութիւնները հնարաւորութիւն չեն տալիս բոլգարական գեներալ-շտաբին թոյլատրել դուրս գալը կամ չէզոք շրջան սահմանելը. ոչ ոք չէ կարող երաշխաւորել, թէ գնդակները պատահմամբ չեն ընկնի այդ շրջանը. վերջին հանգամանքը կը ստեղծէ դժուարութիւններ պաշարվածների համար։

Լրացուցիչ տեղեկութիւնների համաձայն թիւրքաց նաւատորմը ապարդիւն մասնակցեց Կավակ-սուի ափերի մօտ տեղի ունեցած կռւին։ Զաթալջայի մի քանի թիւրքական գումարտակներ արտիլերիական կրակի աջակցութեամբ փորձեցին անցնել Ղարա-սուի աջ ափը, բայց մեծ կորուստներով ցիրուցան եղան բոլգարներից։

Ադրիանուպոլսի ռմբակոծութիւնը շարունակվում է։

«Մէյլը» հերքում է արտասահմանեան լրագիրների այն տեղեկութիւնները, իբր սերբիական նոր զօրքեր են գալու Թրակիա։ Բոլորովին բաւական են Զաթալջայի գծում կենտրոնացած զօրքերը ոչ միայն պաշտպանվելու, [illegible] նաև յարձակողական շարժման համար։

Ցէտինիէ.—Յունվարի 25-ին առաւօտեան Սկիւտարի մօտի բոլոր դիրքերում սկսվեց արտիլերիական կռիւ։ Չեռնոգորական արտիլերիան աջողութեամբ ռմբակոծում է Տարաբօշը։

Սկիւտարի տակ սկսված կռւին մասնակցում են նաև սերբ զօրքերը։ Թիւրքաց արտիլերիան թուլացել է։

Լոնդոն.—Ռէյտէրին հեռագրում են Կ. Պոլսից «Դիւանագիտական շրջանները անհանգիստ են այն բանից, որ շնորհիւ կոմիտէտի պրոպագանդայի թէ մամուլի և թէ մզկիթների միջոցով մահմեդականները գրգռվում են և հրաւիրվում են պաշտպանել իսլամը քրիստոնեաների դէմ»։

Լոնդոն.—Չեռնոգորիայի գլխաւոր պատգամաւոր Միուշկովիչը մեկնեց Ցէտինիէ։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼԸ ԵՒ ՀԱՅԵՐԸ

Վերջերս մենք ծանօթացրինք մեր ընթերցողներին թիւրք մամուլի՝ զանազան կուսակցութիւնների բերան համարվող մի քանի օրգանների հայեացքների հետ հայկական հարցի և առհասարակ Թիւրքիայի հայաբնակ վեց վիլայէթներում մտցվելիք վարչական բարենորոգումների վերաբերմամբ։

Այժմ աւելորդ չենք համարում այստեղ առաջ բերել Եգիպտոսում հրատարակվող արաբական մամուլի մի երկու օրգանների կարծիքները նոյն հարցի մասին, քաղելով Կ. Պոլսում հրատարակվող «Բիւզանդիոն» թերթից։

Այսպէս՝ Եգիպտոսում լոյս տեսնող «Էլ Ջէրիդէ» թերթն իր մի առաջնորդող յօդուածում շօշափելով Թիւրքիայի գլխին եկած ներկայ աղէտը՝ գտնում է, որ դրա գլխաւոր պատճառներից մէկն էլ կառավարական ապակենտրոնացման սիստեմի բացակայութիւնն է, որպիսի հանգամանքը երկրի այլացեղ տարրերին պահում է շարունակ դժգոհութեան մէջ։

Ապա թերթը անցնելով հայերին ասում է.

Հայերուն մէջ կայ մեծ մաս մը, որ երբ կը յիշէ հին օրերը, աչքերն արցունքով կը լեցուին։ Ամենքն ալ անկեղծօրէն կը բաղձան բարենորոգումներու։ Հայերուն մէջէն զինուոր եղողները՝ օսմանցի բուլգարներուն ըրածին պէս պատերազմի դաշտին վրայ վատութիւն գործելու հակամէտ չեն։ Հայերուն աչքն չի գտնուիր ցեղակից պետութիւն մը, որ անոր միանան։ Օսմ. սպարապետ Նազըմ-փաշայի կողմէ օսմ. մամուլին մէջ եղած հրատարակութիւնը պատերազմին մէջ հայերուն քաջաբար և հերոսաբար կռուած ըլլալուն մասին՝ կապացուցանէ մեր այս ըսածը և բացայայտ ապացոյց է, որ հայերը մեծ դիրք պիտի գրաւեն օսմ. բանակին մէջ։ Հայերն ալ շատ մը բաներէ կը գանգատին և բազմաթիւ ցաւալի դէպքեր կը թուեն։ Այդ դէպքերը միմիայն բարենորոգումները մոռցնել պիտի տան իրենց, զի իրենց պէտք եղած բարենորոգումներուն գործադրումը հայերուն պիտի [illegible] իրաւունք և զիրենք պիտի կապէ մայրաքաղաքին, առաջն առնելով իբր թէ բարենորոգմանց համար եղած օտար միջնորդութիւններուն։ Հայերը շատ խելացի են ու եթէ ներքնապէս հանգստութիւն վայելեն, տարակոյս չկայ, որ մեծ թշնամի մը պիտի կտրեն այն օտար պետութեան դէմ, որ ուզէ զիրենք իրեն կապել։

Եգիպտոսում հրատարակվող արաբական մի այլ օրգանի, «Էլ-Մօքատտամ», Կ. Պոլսի թղթակիցը գրում է հետևեալը.

Ոեւէ խելացի մարդ չուրանար, որ օսմ. պետութիւնը այն ատեն միայն կրնայ մնալ, երբ հիմնուի ժողովուրդին փափաքին, բաղձերուն ու սովորութիւններուն համաձայն սահմանադրական կառավարութիւն մը։ Մինչև որ նահանգներուն չտրուի վարչային ընդարձակ անկախու[illegible] նահանգային վարչական խորհուրդներուն ընդարձակ իրաւասութիւններ չտրուին, ասիկա չի կրնար իրականանալ։ Այլազան տարրերուն պատկանող օսմանցիներ այս ճշմարտութիւնը հասկցան։ Կառավարութիւնն ալ այս խնդրոյն մեծ ուշադրութիւն ընծայեց և անցեալ օր Բ. Դուռ հրաւիրելով հայոց նախկին պատրիարքն ու հայ երեսփոխներ՝ արևելեան նահանգներուն մէջ ի գործ դրուելիք բարենորոգումներուն մասին անոնց կարծիքը հարցուց։

⁂

Բոլգարական մամուլն ևս սկսել է զբաղվել հայկական հարցով։ Այսպէս՝ բոլգարական ազատական-առաջադիմական հոսանքի օրգան «Բըլգարիա» թերթը հայերի մասին ի միջի այլոց գրում է հետևեալը, որ առաջ ենք բերում քաղելով «Արմէնիայից»։

... Մեր պարտականութիւնն է ձեռք կարկառել մեր հայ եղբայրներուն, որոնց տառապանքները մերիններէն աւելի մեծ են։ Պէտք է որ բալկանեան դաշնակցութիւնը Ռուսիոյ հետ ձեռք-ձեռքի տուած պահանջէ հայ ազգին համար գէթ Լիբանանի նման վարչութիւն մը ինքնավար։ Միթէ հայոց նման կենսունակ, եռանդուն, ընդունակ, աշխատասէր, նախաձեռնող, խնայող, արթուն, համեստ ազգ մը արժանի չէ լաւագոյն վիճակի մը։ Եթէ ճակատագիրը խորթ մայր մը չըլլար հայուն, ան պիտի ըլլար մեծ ազգ մը Արարատին շուրջ։ Հայերը ունին առանձնայատուկ լեզու մը՝ լեցուն հարուստ դարձուածքներով, որոնց կարելի չէ հանդիպիլ ուրիշ ոևէ լեզուի մէջ։ Ով որ ճանչցած է հայերը, միշտ հիացած է շուտ ստեղծագործելու, կառուցանելու անոնց հրաշալի ընդունակութեանց վրայ, լեցուն բազմակողմանի հարստութիւններով... Երբ Բուլգարիա և բալկանեան դաշնակցութիւնը աւարտեն իրենց ազատարարի գործը, պէտք է պահանջեն հայոց համար 61-րդ յօդուածին գործադրութիւնը՝ երաշխաւորելով այսու Հայաստանի և ամբողջ ազգի մը ինքնավարութիւնը։

Կենդանի ազգ մը, ինչպէս են հայերը, ձգել, որ ոչնչանայ քիւրդերէն, իսկ անդին անգոյն Ալբանիա մը անբնական բարձրացման հասցնել... Ալբանական խնդրէն առաջ պէտք է լուծել հայկական հարցը, կամ գէթ ալբանական հարցին դէմ Ռուսիա պիտի դնէ Հայաստանի հարցը, որ ունի իր պատմութիւնը, իր լեզուն, ազգային գիտակցութիւն, գրականութիւն, որ և երկար ու յամառ պայքարներ է մղած իր ազատագրման և եւրոպական քաղաքակրթութեան Արևելքի մէջ ներմուծուելուն համար։ Եւ այսպէս —Mementa Armenia!—յիշենք Հայաստանը…։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Աղի հանք

Ցղնա, 16 յունվարի

Ցղնայի շրջակայ բոլոր ջրովի և անջրդի հողերը և մօտակայ լեռները, որոնք կազմում են մօտաւորապէս 2200 դեսեատին, գիւղացու սեփականութիւնն են։ Այդքան հողից միմիայն 100 դեսեատինն է ջրվում և արդիւնաբերվում, իսկ մնացածը լեռներ և արօտատեղեր են։ Ցղնայի այդ լեռնային մասում, ինչպէս հաստատ տեղեկացել է օրդուբադցի Թուրք Աբութալիբ-բէկ Ալիխանովը, գտնվում է աղի հարուստ հանք, որի տեղը չէ յայտնում գիւղացուց։ Ալիխանովը 1911 թւին գալով Ցղնա՝ գրաւոր մի թեթև պայման է կապել հասարակութեան հետ, որով թոյլ է տրված իրան՝ իշխանութիւնից իրաւունք ստանալ այդ աղի հանքը բանալու։

Եւ այժմ լիակատար իրաւունք ստանալով հանքային դեպարտամենտից, Ալիխանովը դեկտեմբերի վերջերին կրկին եկաւ Ցղնա և ցոյց տալով ժողովրդին այդ հաստատութիւնը՝ խնդրեց, որ մեր միջից ընտրենք երկու լիազօրներ և տանք նրանց լիակատար իրաւունք՝ իր հետ նոտարական պայման կապելու, որի զօրութեամբ ինքը Ալիխանովն իրաւունք ստանայ 10 տարի շահագործելու այդ հանքը։ Գիւղիս տանուտէրի օգնական Կ. Մինասեանը այդ առիթով ժողով գումարեց գիւղական դատարանում. միաձայն ընտրվեցին համագիւղացի [illegible] և Գ. Գրիգորեանը։ Վերջիններին իրաւունք է տրվում նոտարական պայման կապել Ալիխանովի հետ։

Եթէ այս գործը գլուխ գայ, ցղնացին իրան կատարեալ բաղդաւոր կը զգայ, որովհետև նա ազատ կը լինի պետական և գիւղական որոշ ծախսերից, նոյն իսկ ծխական ուսումնարանը ապահովված կը լինի, ի հարկէ լրացնելով այդ բոլոր ծախսերը աղահանքից ստացած արդիւնքից։

Տէր եմ

—

Մանր վարկի ընկ. ընդ. ժողովը

Քարվանսարա, 17 յունվարի

Ամսիս 13-ին կայացաւ Քարվանսարայի մանր վարկի ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը, որին ներկայ էին աւելի քան 60 անդամներ։ Հաշւետուութիւնից երևաց, որ զուտ օգուտ մնացել է 841 ր. 47 կ., որից մեծ մասը անցնում է հիմնական դրամագլխին ու շինութեան ֆօնդին, իսկ 25 ր. տրվում է հայոց դպրոցին՝ Ռօմանօվների Տան 300-ամեակը տօնելուն ծախսելու, 5 ր. մի աշակերտ պահել ի յիշատակ նոյն ընկերութեան հիմնադիր Գաբրիէլ Ասիլբէկեանի և 107 ր. նուիրել ծառայողներին, իրանց հաւատարիմ և արդիւնաւոր ծառայութեան համար։ Մ. Մ.

—

Մի ուսուցիչ եւս ծեծված

Դիլիջան, 20 յունվարի

Մօտ օրերս, երեկոյեան, մեր հարևան Պօղոս-Քիլիսա գիւղի ծխատէր Ե. ք. Թումանեան մահակներով զինված իր արբանեակներով ներս է խուժում նոյն գիւղի ուսուցչի սենեակը և հայհոյանքների, սպառնալիքների ու գանակոծութեան տակ խոշտանգում։ Ուսուցիչը հիւանդ էր, արիւնահոսութիւն էր ստացել և ամսիս 19-ին գնաց Թիֆլիս բժշկի մօտ։ Ծեծելու պատճառները դեռևս անորոշ են և մանրամասն քննութիւնից յետոյ կը հաղորդեմ «Մշակի» ընթերցողներին։

Յիշեալ գիւղի դպրոցում այդ իսկ պատճառով պարապմունքները դադարել են անորոշ ժամանակ։

Աւետ

ԹԱՐՄԱՑՆՈՂ ՀՈՍԱՆՔՆԵՐ

Նոր-Բայազէտ, 19 յունվարի

Տեղական հասարակական կեանքը ընդհանրապէս թմրած դրութեան մէջ է անցնում. ամեն ոք իր անձնական հոգսերով ծանրաբեռնված՝ տարված է իր անձնական հաշիւներով միայն. ժողովրդի մեծամասնութիւնը՝ կտրված հասարակական արտաքին կեանքից՝ գլխովին թաղված է իր ընտանեկան ներքին կեանքում, հետևապէս ժողովրդական կեանքը ամեն կողմից մեռած պէտք է համարել մեզանում...

Սակայն այդ բոլորի դէմ մի փոքր մխիթարական է, որ ծխ. դպրոցի վարչութիւնը մի շարք դպրոցական հանդէսներով (ներկայացումներ, երեկոյթ-ցերեկոյթներ, տօնածառ, կօնցերտներ և այլն) թարմութեան հոսանք մտցրեց ժողովրդի մի որոշ դասակարգի շրջանում, ոգևորելով հասարակութեան այն մասը, որ անմիջական կապ ունի դպրոցի հետ և գնահատում է նրա շահերը։

Մանաւանդ կօնցերտային մասը, որը ղեկավարում է ծխ. դպրոցի ուսուցիչ Դ. Ղազարեան, այս տարի իր գագաթնակէտին է հասել։ Նոյնիսկ շատ աշակերտուհիների ծնողներ, որոնք նախկին տարիներում զլանում էին թոշակներ վճարել, այժմ, տեսնելով երաժշտութեան արդիւնքը, ահագին գումարներ են զոհում երաժշտական գործիքներ գնելու իրանց որդոց համար, որոնք սովորում են նուագել զանազան երգեր Ղազարեանի խմբապետութեամբ, որի խումբը բաղկացած է 40 հոգուց (երկսեռ), որը ահագին զարկ է տուել ժողովրդական երգեցողութեան։

Աւելի համակրանքի արժանի է այն հանգամանքը, որ քաղ. ռուսաց ուսումնարանի վարչութիւնը նոյնպէս մասնակից է հայոց դպրոցի վարչութեան ձեռնարկութեան։ Օրինակ, ծխ. դպրոցի երգեցողութեան ուսուցիչ Դ. Ղազարեանը երգեցողութիւն է սովորեցնում նաև ռուսաց դպրոցի աշակերտներին, խումբ կազմում առանձնապէս տօների և առաջիկայ փետրվարի 21-ի Ռօմանօվների Տան 300-ամեայ յոբելեանական հանդէսների համար և այլն։ Իսկ ռուսաց դպրոցի ուսուցիչ Պետրոսեան իր շնորհալի խաղով միշտ մասնակցում է հայոց դպրոցի օգտին տրվող ներկայացումներին՝ առանց մի որևէ վարձատրութիւն ի նկատի ունենալու։ Դա մի բարոյական կապ է տեղիս դպրոցական վարչութիւնների մէջ, որոնց գլխաւորները՝ ռուսաց դպ. Ալ. Աբրամեան, իսկ ծխ. դպ. Վ. Ափրիկեան՝ աւելի բարեկամական ձեռք են մեկնել իրար՝ յօգուտ և ի բարգաւաճումն ժողովրդական դպրոցների և ի մխիթարութիւն ծնողների և հասարակութեան։ Դրանք թարմացնող հոսանքներ են ժողովրդի թմրած կեանքում, որ արժանի են առանձին ուշադրութեան։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

«ՄԱՐԳԱՐԷԻ ԺԱՌԱՆԳՆԵՐԻ» ԿԱՅՍՐՈՒԹԻՒՆԸ

(Պալլաւկօսի)

Սուլթանները մեծարվում են հետևեալ ածականներով. «մարգարէի յաջորդ», «խաների խան», «դրախտի ոգի» և «Աստուծոյ ստուերը երկրի վրա»։

«Մարգարէի յաջորդը» մեծ և անողորմ Մահմեդն էր (1656 թ.), որը ամեն տարի մի քանի տասնեակ հազար մարդ էր կոտորում։ «Խաների խանը» (1876 թ.) երիտասարդ-թիւրքերի և ներքինիների ձեռքով խեղդված Աբդիւլ-Ազիզն էր։ «Դրախտի ոգին» պալատական կամարիլլայի հրամանով գահից զրկված սուլթան-Մուրադն էր (1876 թ.), իսկ «Աստուծոյ ստուերը երկրի վրա» Աբդիւլ-Համիդն էր, որը մի քանի հարիւր հազար հայ կոտորել տուեց և իր պրեմիէր մինիստր Միտհատ-փաշայի գլուխը թանգագին արկղով ստացաւ։ Այժմ Աբդիւլ-Համիդն օսմանեան բանտում իր ստուերի հետ է խաղում, ինչով որ դեռ ոչ շատ վաղ անցեալում ուրախանում էր այժմեան «երկրի վրայի Աստուծոյ ստուեր» սուլթան Մահմեդ V-ը։

«Մարգարէի յաջորդները» Եւրոպա անցան Ասիայից և Պարսկաստանից՝ Փոքր Ասիայով, իսկ նրանցից մեն՝ Մուրադ I-ը (1360 թ.) Դարդանէլն անց կացաւ։

1453-ին օսմանցիները բոլգար հաւատարաց Բաս[illegible]օղլիի առաջնորդութեամբ յարձակվեցին Կ. Պոլսի վրա, որն այժմ, բոլգարական գերման թագաւոր Ֆերդինանդը ուրախութեամբ Ռուսաստանին ենթարկել է ուզում։

Յետագայում թիւրքերը վերցրին Ասօրիքը, Տրիպոլիսը, Եգիպտոսը, Ղրիմը, Բալկանները, Հայաստանը, Փոքր Ասիան, Սօֆիան (1383), Ադրիանուպոլիսը (1360) և Կ. Պոլիսը (1453), իսկ Ունգարիան ամբողջապէս աւերեցին։

Այժմ ամբողջ մահմեդականութեան գլուխ սուլթանը խլում է «իր ժողովրդից» այն ամենն, ինչ որ կարողանում է*), իսկ «իր ժողովուրդը» յաւիտեան քաղցում է և հարկերով մեռնում է համաճարակող հիւանդութիւններից. այդ բանը հաստատեցին այն օֆիցէրները, որոնք Անատոլիայում զինուորագրութեամբ էին զբաղված և միաժամանակ Կ. Պոլսի լրագիրներին աշխատակցում էին. ահա թէ ինչ էին ասում նրանք անցեալ տարվայ մայիս ամսվայ համարներում. «Ընկնաւորութիւնը, սիֆիլիսը, տուբերկուլօզը, խարդի հիւանդութիւնները և մալարիան գաւառացիներին ստուերներ են դարձնում»։ Եւ ի զուր (1867 թ.) չէր գրում Մուստաֆա-Ֆազիլ-փաշան սուլթանին. «Ձեր հպատակները բաղկացած են ճնշողներից և ճնշվողներից»։

Սուլթանն ստանում է իր հպատակներից փող կամ բնական բերքեր, բացի գոյութիւն ունեցող հարկերից, այնքան որքան որ իրան պէտք է, կամ որոշ նպատակ ունի իրականացնելու. այդ պատճառով էլ օսմանցիների կայսրութիւնը ամենևին ծանօթ չէ եւրոպական պետական խիստ որոշ բիւջէ տեսքերին։

Սուլթանին հաւատարմութեամբ ծառայում են բէյերը, կալուածատէրերը ու ազնուականները և հէնց դրանք էլ ստանում են գանձարանից բոլոր վարձու հողերը։ Այդ սենատորները, մինիստրները, նահանգապետները, չինովնիկները և դատաւորները, որոնք հօնօրարների ցուցակներ մշակեցին յանուն կեղծ հաւատարմութեան կամ երդումի. այդ ժանդարմները, որոնք իրանց պէտք չեկած բողոքողներ պարկերով ծովն էին գլորում. այդ ոստիկանութիւնը, որ ապրում է «բախշիշով», կաշառքով պաշտօնեականները, որոնք առաջին իսկ մատնութիւնից յետոյ բռնում էին, յաճախ էլ իրանց ցանկութեան համաձայն, ում որ հաճելի էր, կամ որ հարկաւոր էր։

250,000-նոց *) բանակն ունէր 50,000 օֆիցէր (խաղաղ ժամանակ), 6200 ծովային օֆիցէր 6000 մարդուն, մի գնդին 20 հատ գնդային հրամանատար։ Այդ բոլորին, ինչպէս և զինուորներին, թիւրքական գանձարանը անբարեխղճօրէն էր վճարում, շատ անգամ էլ ոչինչ չէր տալիս. այդ պատճառով էլ դրանք վաշխառութեան էին դիմում և ազգաբնակութեանն արնաքամ անում։

«Խաների խանը» կենտրոնում նստած միմիայն հրամաններ է տալիս իր բէյերին, որպէսզի ծայրագաւառներում իր իշխանութեան տակ գտնված ժողովուրդներին թալանեն։

Յոյները չը տարան այդ բռնութիւնները և 1830-ին ապստամբվեցին։ Այժմ յոյներն իրանց թագաւորութիւնն ունեն. իսկ յոյն գիւղացիները, որոնք 1909-ին ապստամբութեան դրօշակ էին բարձրացրել, հիմա կողոպտվում են ոչ թէ թիւրքից, այլ յոյն կալուածատէրերից ու ազնուականներից։ Յոյները 2.600,000 հոգի են, ամեն տարի 300 միլիօն ֆրանկի առևտուր են անում։

Յոյներին հետևեցին ռումինները 1861 թւին. 1878-ից (Բեռլինի կօնգրէսից) սկսած նրանք էլ ունեն իրանց սեփական թագաւորութիւնը։ Ռումինացի գիւղացիները 1905—06 թւերին ապստամբեցին, բայց ոչ թէ թիւրքերի, այլ իրանց «տէրերի» դէմ։ Նրանք 7 միլիօն են. տարեկան 1000 միլ. ֆրանկի առևտուր են անում։

Ռումիններից յետոյ եկան սերբերը։ Սերբերն էլ ունեն իրանց թագաւորութիւնը. այժմ սերբիական գիւղացութիւնը երեք քայքայող պատերազմների բեռի տակ բոլորովին կորացաւ և ոչնչացաւ։ Տարէցտարի աւելի ևս աղքատանալով՝ նա իր խոզերն ու եղջիւրաւոր անասունները մեծ քանակով արտածում է ուրիշ երկիրներ, այնպէս նա չէ կարող իր պատերազմական ծախքերը հոգալ։ Սերբերը երեք միլիօն են, տարեկան 200 միլիօն ֆրանկի առևտուր են անում։

Սերբերից յետոյ գալիս են չեռնոգօրցիները, որոնք 300,000 հոգի են և տարեկան 12 միլ. ֆր. առևտուր են անում։

Յետոյ՝ բոլգարները։ 1878-ին նրանք սուլթանի վասսալները դարձան։ 1885-ին նրանք Թիւրքիայից խլեցին Արևելեան Ռումելին, իսկ 1911-ին դարձան անկախ թագաւորութիւն։ Այժմ բոլգար գիւղացիները իրանց հարուստ «չօրբաջիների» ճնշումների տակ են հառաչում։ Ամբողջ բոլգարները $4^{1}/_{2}$ միլիօն են. տարեկան 400 միլիօն ֆր. առևտուր ունեն։ 1908-ին աւստրօ-ունգարական մօնարխիան օսմանցիների կայսրութիւնից խլեց Բօսնիա-Հերցեգովինան, որը դեռ մինչև օրս էլ չը գիտէ, թէ երբ էր իր համար աւելի վատ, առաջ թէ հիմա։ Հերցեգովինացիներն ու բօսնիացիները 2 միլիօն են, միասին 300 միլիօնի առևտուր են անում։

Անցեալները Իտալիան զրկեց Թիւրքիային Տրիպոլիտանիայից, իսկ այժմ օսմանցիներից հեռանում են բոլոր մակեդոնական ժողովուրդները. նրանք 3 միլիօն 200,000 են և տարեկան 150 միլ. ֆր. առևտուր են անում։

Այսպէս՝ «մարգարէի յաջորդները» կորցրին 21,600,000 վճարող հպատակներ և 2,362,000,000 ֆրանկի առևտրական շրջանառութիւն*)։

Եւ այդ դեռ բոլորը չէ։ Այժմ Եգիպտոսն էլ է ցանկանում անջատվել, որդէն 1833-ին ապստամբողները վերցնելու էին Ստամբօլ-

---

*) Աբդիւլ-Համիդը պաշտօնապէս ստանում էր 902,110 թիւրքական ֆունտ. երիտասարդ-թիւրքերն այդ գումարը իջեցրին 493,640 թիւրք. ֆունտի։

*) Mugafir, «Note sur la jeune Turquie».

*) Առանց Տրիպոլիտանիայի։

Մի բան միայն սխալ գործեց ծխ. դպ. վարչութիւնը, որով և մի փոքր տրտունջ առաջացրեց ժողովրդի մի որոշ դասի մէջ։ Այդ այն է, որ դեկտ. 31-ի գիշերը մի ճաշկերոյթ էր սարքված դպրոցի դահլիճում համերգային բաժնով յօգուտ դպրոցի։ Սակայն ընթրիքին մասնակցելու հրաւէրը ընտրովի էր եղել, այսինքն ում ցանկացել էր վարչութիւնը՝ նրան հրաւիրել էր և դափ ու զուռնայով մի լաւ քէֆ սարքել դպրոցի դահլիճում, ի հարկէ վճարով, թէպէտ, ինչպէս լսում ենք, այնքան էլ վաստակ չէ մնացել դպրոցի օգտին։ Բայց շատերի կարծիքով աւելի լաւ էր հրաւէրը տոմսակներով լինէր, որովհետև երբ բոլոր տոմսակները՝ տեղի համաձայն՝ ծախվէին պրծնէին, այլ ևս ոչ ոք իրաւունք չունէր դժգոհելու՝ թէ այս-ինչին հրաւիրել են ճաշկերոյթի, իսկ ինձ ոչ։ Այն ինչ շատերը դժգոհել էին, որ իրանց չեն հրաւիրել, իսկ իրանցից ցած մարդիկ մասնակցել են ընթրիքին։

Այդ է գուցէ պատճառը, որ Ծննդեան երեկոյթին դպրոցի օգտին «Աւետիս» շրջողների դէմ մի քանի ընտանիքներ դռները փակել էին և չէին ցանկացել մասնակցելու այդ առիթով կատարվող հանգանակութեան և այդպիսով «Աւետիսից» գոյացած գումարը անցեալ տարիների կէսից էլ պակաս է հաւաքվել։

Vorsort

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Մօտ երկամսեայ բացակայութիւնից յետոյ Հ. Առաքելեան երէկ, յունվարի 26-ին, Պարիզից վերադարձաւ Թիֆլիս։

◆ Թիֆլիսումն է պարսից պետական գործիչ Սիփէհդարը։

◆ Յունվարի 25-ի երեկոյեան Թիֆլիսում ձերբակալվեց քաղաքային դումայի ձայնաւոր ինժեներ Արշակ Բաբեանը։

◆ «Бир. Вѣд.»-ի թղթակից Օլգէնինը Թիֆլիսում իր ստացած տպաւորութիւնների մասին յաջորդաբար յօդուածներ է տպում յիշեալ թերթում։ Նա արդէն ուղարկել է 4 յօդուած, որոնց մէջ խօսում է սենատոր Վատացիի, Ալ. Քալանթարի, Վաամեանի և այլ անձերի կարծիքների մասին, վերաբերեալ Թիւրքահայերի արդի կեանքին։

◆ Յիշեցնում ենք, որ այսօր Արտիստական Ընկերութեան դահլիճում տեղի կունենայ պրոֆ. Յովհ. Նալբանդեանի երկրորդ ու վերջին համերգը բոլորովին նոր ծրագրով, որի մէջ մտնում են Վիտալի, Բախի, Հէնդելի, Մոցարտի, Բուրմէստրի, Շոպէնի, Աուէրի, Վենեավսկիի և ուրիշների երկասիրութիւնները։

◆ Վաղը Արտիստական թատրոնում հայ դերասանների խումբը կը ներկայացնէ առաջին անգամ հայերէն Ալ. Տոլստոյի «Իւանն Ահեղի մահը» ողբերգութիւնը՝ խմբի պրեմիէր Յ. Աբէլեանի բենեֆիսի առիթով։ Անշուշտ հայ հասարակութիւնը սովորական տարիների նման վաղը ևս կը լցնէ թատրոնը իր տաղանդաւոր և լուրջ դերասան Աբէլեանին յարգելու ու գնահատելու դրդված։ Պիէսի նորութիւնը ևս լինելու է ազդակ վաղվայ լիակատար աջողութեան։

◆ Ստացանք եղբ. Մելիք-Մարութեաններից 15 րուբլի, որ նուիրում են Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան՝ Երուանդ Մանուէլեանի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն։

◆ Հայոց Դրամատիկական Ընկերութեան ժիւրին իր վերջին նիստում մրցանակի է արժանացրել Ալ. Տոլստոյի «Իւանն Ահեղի մահը» ողբերգութեան հայերէն թարգմանութիւնը, որ կատարել է Տ. Յովհաննիսեան։

◆ «Միխայլովոյի» և «Բորժոմի» դեպոների ծառայողները, թւով 337 մարդ, իրանց միօրեայ աշխատավարձը—579 ր. 81 կ.— նուիրեցին օդային նաւատորմ կառուցանելու ֆոնդին։

◆ Թիֆլիսի քաղ. վարչութիւնը առաջարկելու է դումային յատկացնել յայտնի զինուորական պատմաբան Պոտտոյի արձանի համար քաղաքի կողմից 150 րուբլի։

◆ Սկսված են նախնական աշխատանքները Ծալկայի աղբիւրներից ջուր մատակարարելու Թիֆլիսի ազգաբնակութեանը։

◆ Թիֆլիսում պօստ-հեռագրական գրասենեակի նոր շէնք կառուցանելու համար նախահաշւի մէջ մուծված է 624,000 ր.։

◆ Թիֆլիսի նահանգապետը հաստատեց մսի հետևեալ նոր սակագինը. տաւարի մսի փունտը 14 կ., ոչխարինը՝ 17 կ. և գոմէշինը՝ 9 կ.։

◆ Այսօր, ցերեկվայ ժամը ճիշդ 12-ին Թիֆլիսի Ժողովարանի դահլիճում Արշակ Ջամալեան Յարութիւնեանը դասախօսելու է «Շանթը և իր Հին Աստուածները» նիւթի մասին։

◆ Այսօր Ժողովրդական Տանը ռուս թատերասէրները կը կրկնեն «Համլէտը» դերասան Բաղոլինի մասնակցութեամբ։

◆ Այսօր Պալմովը Ժողովրդական Տանը ժամը 1-ին կը կարդայ դասախօսութիւն «Ն. Միխայլովսկին իբրև 70-ական թւականների գաղափարական գործիչ» թեմայով։

◆ Վաղը Ժողովրդական Տանը կը կայանայ Լէվ Պչնովի համերգը։

◆ Այսօր Զարէչնիի դրամատիքական խումբը երկրորդ անգամ կը ներկայացնէ «Проклятіе безплодія» նոր պիէսը։

◆ Այսօր երեկոյեան Արքունական թատրոնում կը տրվի «Красное солнышко» օպերան։

◆ Երեքշաբթի, յունվ. 29-ին, Ժողովրդական Տանը ռուս երաժշտասէրների խումբը կը ներկայացնէ «Դէմօն» օպերան։

◆ Թիֆլիսի նահանգապետը յատուկ շրջաբերականով շնորհակալութիւն է յայտնում Թիֆլիսի ոստիկանապետ գ. մ. Զասիպկինին, խուզարկու բաժնի պետ Գագիէվին և բոլոր ոստիկանական պաշտօնեաներին վերջերս ցոյց տուած եռանդուն գործունէութեան համար, որի հետևանքը եղաւ մի քանի յայտնի աւազակապետների սպանութիւնը։

◆ Վրաց յայտնի դերասան Ալէքսէեվ-Մեսխիեվի յոբելեանի օրը, փետրվ. 10-ին, ողջունելու է յոբելեարին նաև քաղաքային վարչութիւնը, ներկայացնելով մի ուղերձ։

◆ Այսօր Նախալովկայում «Նաձալէվի» թատրոնում Երմոլովը կը կարդայ դասախօսութիւն Հաուպտմանի մասին։

◆ Հայուհեաց Որբախնամ Ընկերութեան վարչութիւնը խնդրում է մեզ տպել հետևեալը. «Ընկերութեան օգտին դեկտ. 14-ին 1912 թ. Արքունական թատրոնում կայացած օպէրային ներկայացումից ընդհանուր մուտք ստացվել է 1554 ր. 35 կ., իսկ ծախք եղել է 814 ր. 35 կ.։ Զուտ արդիւնք է մնացել յօգուտ ընկերութեան 740 րուբլի։ Վարչութիւնը իր խորին շնորհակալութիւնն է յայտնում այն բոլոր տիկիններին և պարոններին, որոնք թէ նուէրներով և թէ բարոյական աջակցութեամբ նպաստեցին ներկայացման նիւթական աջողութեանը»։

◆ Շամախուց մեզ գրում են. «Յունվարի 23-ին, առաւօտեան ժամը 9-ից 30 ր. անց պատահեց երկրաշարժ բաւականաչափ ուժեղ և երկարատև. 15 ր. անց նոյն ժամանակ զգացվեց ստորերկրեայ երկու ցնցում. հարուածը արեւմուտքից արևելք էր»։

ԳԻՏՈՒԹ.. ԳՐԱԿԱՆ.. ԳԵՂ ԱՐ.

ԳՐԱԿԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆՈՒՄ

I

Սալօնի հերթական նիւթը, յունվարի 25-ի երեկոյեան, նուիրված էր վաղամեռ բանաստեղծ Դուրեանին։

Մօտաւորապէս ժամը 9-ին 60-ի չափ երկսեռ հանդիսականների ներկայութեամբ, սալօնի տնօրէն Տ. Նազարեան հրաւիրում է Ա. Քալանթարին բանալ ժողովը։

Ա. Քալանթար, բանալով ժողովը, առաջարկում է ներկայ եղող թիւրքահայերից մէկին ու մէկին նախագահ ընտրել այս անգամ։

Սակայն թէ վերջիններս և թէ ժողովականները խնդրում են Ա. Քալանթարին նախագահել։

Ա. Քալանթար, գրաւելով նախագահական աթոռը, մի ամփոփ բանախօսութիւն է նուիրում Դուրեանին.

«Ներկայ յունվարի 20-ին լրացաւ 41 տարի այն օրից, երբ Կ. Պոլսի հայ երիտասարդութիւնը զրկվեց իր սիրելի ընկեր բանաստեղծ Պետրոս Դուրեանից նրա ծաղկափթիթ հասակում, երբ հազիւ լրացել էր բանաստեղծի 21 տարին։

«Դա տխուր, սրտաճմլիկ օր էր։

«Մեծ բանաստեղծական ապագայ խոստացաւ գեղարուեստական կոկոնը, հազիւ բացված, պոկվեց աշխարհից և անհետացաւ։

«Այսօր նրա յիշատակի համար ենք հաւաքված և մենք Գրական Սալօնում։

«Նախ և առաջ կարևոր եմ համարում նկատել, որ թիւրքահայերը քաղաքական պայմանների շնորհիւ անկարող եղան տօնել այդ վաղամեռ գրողի 40-ամեակը, որ լրացաւ անցեալ տարի։

«Անցել են չորս տասնեակ տարիներ և կարծես թէ դեռ թարմ է բանաստեղծի շիրիմը։

«Նա նուիրական է թիւրքահայ երիտասարդութեան համար։

«Դուրեանի հմայքը դեռ ևս շատ զօրեղ է։ Ի՞նչ է տուել նա։ Այն, ինչ որ տուել է նա, նրանք փայլուն յոյսեր էին ապագայ ստեղծագործական տաղանդի համար։

«Ճիշդ է, քիչ է նրա թողածը։ Ոտանաւորների մի փոքրիկ հատորիկ։ Ոտանաւորներ, գրված 1867 թ. սկսած, երբ բանաստեղծը 16 տարեկան էր, մինչև 1872 թւի սկիզբը։ Բայց այն տողերի մէջ, որոնք գրվել են, կան մի քանի բիւրեղ գոհարներ, թանգագին մարգարիտներ, որոնք պարծանքն են իրանց հեղինակին կուռք թիւրքահայ պատանեկութեան համար։

«Դուրեանը մարմնացումն էր իր ժամանակակից պատանեկութեան բանաստեղծական ոգևորութիւններին և գրական ստեղծագործական տենչերին։

«Դուրեանը ասպարէզ եկաւ մի այնպիսի ժամանակ, երբ պայմանական և արհեստական ոտանաւորներ հիւսելը դեռ շատ տարածված էր։

«Նրա ամենախոշոր հմայքներից մէկը կայանում էր նրանում, որ նրա երգածը հարազատ էր ու անկեղծ։ Նա իր ժամանակի երիտասարդութեան ըմբոստներից մէկն էր, որ բողոքում էր ձևականութեան դէմ. և նա առաջինն էր, որ իր գրուածքների մէջ մտցրեց անհատական զգացմունքներ ու տրամադրութիւններ, որ այն ժամանակվայ հանգամանքներում հանդէս եկաւ իբրև յեղաշրջող երեւոյթ գրական-բանաստեղծական գործի մէջ։

«Սուբեկտիվիզմը, որ գերակշռում էր նրա մէջ մեծ քանակով, տուեց առանձին դրոշմ նրա ստեղծագործութեան։ Նրա անունը հմայիլ է թիւրքահայերին. երիտասարդութիւնը հմայվել է նրանով, գտնելով նրա մէջ իր յոյսերի, յոյզերի ու երազների արտայայտիչը. ծերերի համար նա եղել է ոգևորութիւն ազդող։ Իսկ գրական պատմագրողը նրա մէջ տեսաւ միայն բէալ ու ըմբոստ գրող։

«Նա միևնոյն ժամանակ ապրում էր մի այնպիսի ժամանակ, երբ վէճը գրաբարի և աշխարհաբարի արրեժով շարունակվում էր Կ. Պոլսում։ Պոլսեցիները, ինչպէս յայտնի է, գրաբարի ջերմ հետևողներ էին։ Դուրեանը գրաբարի դէմ բողոքողներից և ըմբոստներից մէկն էր։ Նրա ոտանաւորներին նոյնիսկ՝ մենք տեսնում ենք, որ շատ քիչ էպիքական է. կան բնութեան գեղեցիկ նկարագրութիւններ, բայց գերակշռում են սիրոյ, ընկերսիրական, տառապանքի ու մահուանց երգերը։ Կնոջ վերաբերմամբ նա «Նէ» գործածողներից մէկն է։ Ունի շատ պիէսներ, գլխաւորապէս պատմական։ Սակայն նրա ամենաուժեղ ոտանաւորները պատկանում են մահվան մօտ ժամանակներին, որոնց մէջ նա արտայայտում է իր կենսասիրական ու մահվան սոսկումի զգացմունքներն ու ճիչը, ապրելու տենչը և մահվան կռիւը։ «Տրտունջը» ոտանաւորը մի եռանդուն բողոք է մահվան դէմ։ Պէտք է ասել, որ թիւրքահայ գրողների մէջ անցեալներում լուրջ զբաղվողներ եղել են Պետրոս Դուրեանով, ինչպէս Ա. Զօպանեան, Եղիշէ Երզնկեան քահանայ և ուրիշները։ Նրանք ամեն կերպ ձգտում են լուսաբանել Դուրեանի գրական դէմքը։ Ի վերջոյ, ես պիտի ասեմ, որ Դուրեանի դերը շատ մեծ է թիւրքահայ գրականութեան վրա։ Թիւրքահայ երիտասարդութեան համար նա մի ամբողջ խորհրդանշան էր, մանաւանդ պատանի գրողների համար»։

Ա. Քալանթար վերջում պատմեց, որ Պետրոս Դուրեանի պատկերը չէ եղել նկարված նրա կեանքի օրերում և յետոյ բարեկամները շրջանում աշխատել են ամբողջացնել նրա դէմքը, օգտվելով նման անձերի դիմագծերից։

«Այժմ խօսքը ձեզ է պատկանում, պ. Իփէկեան»։

Իփէկեան.—Երկու օր է, որ ինձ յայտնի եղաւ, թէ երեկոյթ կայ Դուրեանի մասին։ Կարճ էր ժամանակը։ Դուրեանին ուսումնասիրելու համար լուրջ աշխատութիւն է հարկաւոր։ Իբրև թիւրքահայ, լաւ ծանօթ լինելով նրա գրուածքներին, ես, այնուամենայնիւ խօսակցութեան ձևով կը տամ մի քանի տեղեկութիւններ, որոնք գուցէ հետաքրքրական լինէին ձեզ համար։ Այդ տեղեկութիւնների ես տալիս եմ նրա կենսագրականից և լսած անեկդոտներից։ Դուրեանը աղքատ ընտանիքի զաւակ է եղել։ Ես կը կարդամ Խորէն Նարբէյին ուղղած նամակից մի կտոր, որից դուք կը տեսնէք, թէ ինչպէս է ապրել, ժամանակ անց կացրել և իր զգացմունքները արտայայտել Դուրեանը։ (Կարդում է. «Ինչ-ինչ հանճարներ... Ալ բաւ...»)։ Այդ կտորը նրա հոգու ու զգացմունքների ըմբոստացումն է ցոյց տալիս։ Խառնուածքով բանաստեղծ, բայց նիւթական ծանր պայմաններում, նա ընտրում է գործակատարի պաշտօն, սակայն, եղել է վատ պաշտօնեայ, այնպէս որ ստիպված է եղել թողնել։ Նրան շուտով գրաւել է բեմը։ Հայրը չէ ախորժել այդ և գնացել յետ է բերել, նոյնիսկ ասում են՝ ծեծելով։ Չը նայելով դրան՝ թատրոնը նրա վրա խոր ազդեցութիւն է ունեցել, նրա մէջ առաջացրել է պիէսներ գրելու սէր։ Ազգասէրութիւնը յետոյ նրան ստիպել է գրել նաև ապրելու համար, շատ խղճուկ հոնորարով և այն էլ տալիս են եղել ժլատութեամբ։ Ասում են նոյնիսկ, որ մի անգամ հացի փող չունենալով նա տուել է իր պիէսաներից մէկը 5 ղահեկանով (40 կոպէկ)։ Նիւթական այդ նեղ վիճակը վերջապէս նրան գլորել է երկնքի հիւանդութեան՝ թոքախտի գիրկը։ Նրա ոտանաւորների տխուր շեշտն արդեօք հիւանդութիւնից էր, սիրուց, թէ դա նրա խառնուածքի բնական արդիւնքն էր։ Ես կարծում եմ՝ ոչ այնքան հիւանդութեան, թոքախտի, այլ նոյնքան սիրոյ, որքան ժամանակակից կեանքի տխուր պայմաններից, հայ իրականութեան տուած արդիւնքն ու արձագանքը։ Նրա մէջ մենք տեսնում ենք այնպիսի ջինջ ու անկեղծ զգացմունք, այնպիսի հաւատալ ոյժ, էլէքտրականացում, որ անկարելի է նրա անկեղծ շեշտի, թախիծի առաջ չը լալ նրա հետ. այնքան գրաւիչ է, այնքան վարակիչ. նա բոլորի համար այնքան խոր է ազդում և համակող է նրա անկեղծութիւնը։ Նրա ամեն մի տողը ապրված է։

Տարիներ կանցնեն, բայց նա կայ ու կը մնայ երիտասարդութեան համար սիրելի, մտերիմ, ամենախոր, ամենազգայուն բանաստեղծը։ Ահա թէ ինչու տարիներ անցնելուց յետոյ երիտասարդ սերունդը դարձեալ պաշտում է նրան։ Բայց մի պարագայ կայ, ինչու համար Դուրեանը իր 20—25 ոտանաւորներով գրաւել է աւելի հմայիչ դիրք, քան ուրիշ այն ժամանակի աւելի հեղինակաւոր բանաստեղծները։ Պատճառը նրա լեզուն է և արտայայտելու նոր ձևը, ինչպէս ակնարկեց այդ կէտը պարոն Քալանթար։ Եթէ համեմատենք նրան Պէշիքթաշլեանի, Նարբէյի ու այլոց հետ, մենք կը տեսնենք, որ Դուրեանը աշխարհաբարի ամենաառաջին, փայլուն և հեղինակաւոր գրողներից մէկն է եղել։ Նա ժողովրդական կենդանի լեզուն, աշխարհաբարը անզգալաբար հասցրել է գեղարուեստականութեան։

Եւ նա իր խոր կնիքը դրոշմել է թիւրքահայ գրականութեան վրա և պիտի էլ դրոշմէ յետագայ ուրիշ գրողների լեզուի վրա։ Գրաբարի և աշխարհաբարի այն հաշտեցումը, որ այժմ առաջարկում է Զօպանեանը, Դուրեան բնազդօրէն ըմբռնել է իբրև ճշմարտութիւն և տուել մեզ թիւրքահայերիս սրանից 40 տարի առաջ։ Ահա ինչումն է Դուրեանի լեզուական և գեղարուեստական մեծ նշանակութիւնը. բարեկամական զգացմունքների, հոգեկան մըրմունջների մի յորդահոս աղբիւր է, ծնունդ այն մթնոլորտի, որի մէջ ապրում էր նա. վարել է թշուառ կեանք, բայց բաղդաւոր է եղել իր ընկերներով, որոնք սիրել են նրան։ Բայց լքումը, թախծալի տողերի մեծ մասը և ամենից ուժեղները տառապանքի արդիւնքն է։ Նա մաքառել է թոքախտի դէմ տղայական միջոցներով, օրինակ՝ դիմել է կարմիր սառաշաքարի օգնութեան։ Բայց մի հարց. արդեօք սիրել է նա մէկին կանացի սեռից, սիրել է նա մի էակ։ Զօպանեան կարծում է, որ «Նէն» չէ եղել, որ բոլոր ցուցումները երևակայութեան ծնունդ են, որ նրա սէրը եղել է երազական, պլատօնական, աննիւթ, նուիրական։ Եղել է լոկ ձգտում սիրելու, որ յատուկ է այդ հասակին։ Թէև կան ակնարկներ իր գըրուածքների մէջ։ Այդ է պատճառը, գուցէ, որ նրան սէրը այնքան ուժեղ է ազդել, հրապուրել։ Ուրեմն գլխաւորապէս նա ուզեց սիրել, ձգտեց, երգեց իր սէրը, երգեց իր մահը, հիւանդացաւ ու մեռաւ։ Նրա բանաստեղծական խառնուածքի ոյժը նրան հաւասարեցնում է հայ ժողովրդական բանաստեղծների հետ (կարդում է «Առաւօտեան շաղը»)։ Ահա գծեր Դուրեանի լեզուից։ Եթէ նրա գեղարուեստական նշանակութիւնը որոշենք, նա մի տարօրինակ նկարիչ է, որ մի տողի մէջ խտացնում է մի ամբողջ տեսարան։

Այժմ անցնենք Դուրեանի ոտանաւորներին։

Ճառախօսը ցոյց տալու համար նրա լեզուի ու գեղարուեստի ոյժը՝ կարդում է. «Շաղի, շողի», «Բոյր մը նայուածք», «Սիրել», «Դրժել» իբրև բարեկամական զգացմունքների արտայայտութիւններ՝ «Օ՛ երկընքի ժապաւէններ...», զգայնութիւնների բնորոշումն, «Զղջումն», «Տրտունջք», որ ոչ թէ փիլիսոփայական համոզմունքների արտայայտութիւնն է, այլ բողոքի պոռթկումն է. «Ի՞հ, մնաք բարև, Աստուած և Արև...»։

Ծափահարութիւնների տակ Իփէկեանը վերջացնում է ոտանաւորների արտասանութիւնը, որ ուժեղ տպաւորութիւն գործեց ունկնդիրների վրա։

Նախագահը յայտարարում է 10 րոպէ ընդմիջում։

Լ. Դ.

ԽՈՐ ՇՆՉԱՌՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Խոր շնչառութիւնը քեզ պիտի պահէ առողջութեան մէջ

Մարդկութեան մի ստուար մասը օդ շընչելու մասին գաղափար չունի և շնչելիս գործ է ածում թոքերի վերին սենեակները միայն, թոքերի ներքին յարկերը փակված են, մութ են և թարմ օդի կարօտ և վատառողջ են։

Առանց օդի մենք չենք կարող ապրել մինչև իսկ երեք րոպէ, և մեր թոքերը բացիլների կերակուր չը դարձնելու համար՝ մենք պէտք է սովորենք խոր շունչ քաշելու վարժութիւններ կատարել ամեն օր։ Երբ մենք խոր շունչ չենք քաշում, թարմ օդը թոքերի ներքևի յարկերին չէ հասնում, այսինքն մենք շնչում ենք միայն թոքերի վերին մասերով։

Արիւնը այն միջնորդն է, որը տալիս է կեանք մեր մարմնի իւրաքանչիւր բջիջին (cell) և ամեն մի առհատ բջիջ կախված է արեան քանակի և տեսակի վրա։ Արեան քանակը և տեսակը կախված է կերակուրից և օդից, որ մենք շնչում ենք։

Առաւօտը զարթնելուց անմիջապէս յետոյ՝ բացէք ձեր սենեակի մի լուսամուտը. եթէ եղանակը ցուրտ է, մի վերմակով փաթաթվեցէք և նստեցէք ուղիղ դիրքով մի աթոռի վրա և ձեր ձեռքերը տեղաւորեցէք ձեր ծնկների վրա։ Փակեցէք ձեր շրթունքները և սկսեցէք ձեր քթով երկար ու ծանր շունչ առնել, համրելով մտքում մէկից մինչև եօթ։ Շնչեցէք թարմ օդը, լցնելով այն ձեր թոքերի մէջ։ Ապա արտաշնչեցէք բերանով կամ քթով, համրելով մտքում մէկից մինչև եօթ։ Մէկից եօթը համարելով պիտի շունչ առնէք և պիտի այդքան ժամանակ էլ արտաշնչէք։ Շարունակեցէք այս վարժութիւնը երեք րոպէ։

Կրկնեցէք խոր շնչառութիւնը և արտաշնչութիւնը ծանր-ծանր, մարմինը ծռելով դէպի առաջ, այնպէս որ դէմքը հասնի ծնկների հաւասարութեանը՝ մինչդեռ շունչ էք առնում, և կամաց-կամաց յետ տանելով մարմինը դէպի վեր դիրքում՝ երբ որ արտաշնչում էք։

Այս ձևի խոր շունչ առնելը պիտի աճեցնէ կուրծքի ծաւալը և պիտի բարւոքէ ամբողջ սիստեմը և պիտի հեռացնէ նոր սկսված թոքային հիւանդութիւնները, եթէ կատարվին խոր շնչառութեան վարժութիւններ՝ օրական երկու կամ երեք անգամ, տարբեր ժամանակներ։

Առէք մի լեցուն, երկար, խոր շունչ, որը լայնացնէ կամ տարածէ կուրծքը և որովայնը։ Ապա պահեցէք կուրծքը տարածված և թողէք շունչը դուրս գայ բերանից կամ քթից կծկելով որովայնի մկանները, ձեր կամքով, դէպի ներս և դէպի վեր։ Կրկնեցէք այս վարժութիւնները 7 անգամ։ Այս ձևի խոր շնչառութեան վարժութիւնը

լը, երբ Ռուսիան միջամտեց յանուն Թիւրքիայի շահերի։ Այժմ մարդկութեան կուլտուրայի նախահայր եգիպտացիները և «փարաւոնների յաջորդ» իրանց խըդիվը այլևս սուլթանի վասալները լինել չեն ցանկանում։ Նրանք գաղտնի ժողովներում և կոնգրէսներում առաջադրում են խզվել օսմանեան կայսրութիւնից, ներմուծել սահմանադրութիւն և դուրս հանել բրիտանացիներին Եգիպտոսից. բրիտանացիներն ընդամենը 28 տարի է, որ շահագործում են սֆինքսների և պիրամիդների թագաւորութիւնը։

Եգիպտոսից յետ չէ մնում և Եմէնը. 1516-ից սկսած՝ արաբները շատ անգամ են ապստամբվել օսմանցիների դէմ։ Նրանք Ղուրանի լեզւով են խօսում, ցանկանում են՝ որ Մեկկան ամբողջ մահմէդականութեան և խալիֆայականութեան քաղաքական կենտրոն դարձնեն։ Դրանց իշխանները ասում են, որ իրանք են «մարգարէի յաջորդները», այլ ոչ թէ սուլթանները։

Արաբներն էլ իրանց հերթին սարքում են ժողովներ և արաբական թագաւորութեան մասին խօսում, իսկ ներկայ սուլթանի գահը գրաւելու ձգտումը նրանք ցոյց տուին Բասրայի, Բաղդադի, Մուսուլի և Հօդէյդայի ապստամբութիւններով։

Արաբները թիւրքերին շատ են անհանգստացնում, և վերջին ապստամբութեան ժամանակ՝ 1909-ին՝ նրանց խաղաղացնելու համար թիւրքերն ուղարկեցին դէպի Եմէն 8 բատարէյ և 31 բատալիոն զինւոր։

Ոչ նուազ անհանգստացնում են թիւրքերին և մի քանի անգամ ապստամբած ալբանացիները։ Ալբանիան համոզված է, որ այլևս առանց աւտօնոմիայի չէ կարող ապրել։

Այո, բայց եթէ «խանների խանը» բոլորը ձեռքից հանեն, ճիշտ պիտի վճարի օտար կապիտալիստներին տալիք թիւրքական պարտքերը։ Ինչով պէտք է լրացնի օսմանեան ամբողջ ելքի ու մուտքի միջազգային կոնտրոլը իր գրաւումների ժամերը։

Չէ որ օսմանեան բիւջէի 35 տոկոսը եւրոպական դրամատէրերի կասսաներն է մըտնում։ Չէ որ Թիւրքիան նախ քան թիւրք-իտալական պատերազմը՝ տարեկան 175 միլիոն ֆրանկի դէֆիցիտ ունէր։ Չէ որ Ֆրանսիան (1910-ին) 3000 միլիոն ֆրանկ մտցրեց Թիւրքիա և պահանջեց անմիջապէս մասնակցել օսմանեան մինիստրական աշխատանքներին։

Եւ ինչ կը լինի, եթէ օսմանեան կայսրութիւնը յիշէ փիլիսոփայ Եումի վարդապետութիւնը, որ «մեր մինիստրները մեզ փող պարտք տուողներից շատ աւելի յիմար պիտի լինէին, եթէ չը ցանկանային փրկել ազգը պետական սնանկութիւնից»։ Դա իրքէս է։ Չէ որ Թիւրքիան իր պարտքը չը վճարելու տեսակէտից բաւական շատ փորձառութիւն ունի։ Չէ որ նա հանգիստ կերպով իրան վարկ բացողների պահանջները տալուց դադարեց անցեալ դարի 1875—76—81 թւականներին, որի համար էլ մի անգամ սիրալիր կերպով յայտարարեց (1875-ին), թէ անօգուտ է հաշւում ոչ պարտքերը վճարելու համար՝ նորանոր պարտքեր անել։ Այն ժամանակ ֆրանսիական կապիտալիստները սաստիկ տուժեցին, ինչպէս և Հռոմի պապը, որ Վատիկանի սուրբ կապիտալները բարձր տոկոսներով տուել էր սուլթանին։ Կամ դիպլօմատիան գուցէ թիւրքական պարտքը կը դնի բալկանեան ժողովրդի վրա։ Բայց չէ որ կապիտալիստները նրանց էլ են քիչ հաւատք ընծայում։ Նրանք դեռ ոչ վաղ անցեալում չէ՞ր, որ բոլգարների փոխառութիւնը մերժեցին, և Սերբիայում ու Չեռնոգորիայում չէ որ միջազգային կոնտրոլէօրները նստում են։

1882-ին Ֆրանսիայում սնանկացաւ Պարիզի խաբեբայ Բոնտուի բանկը։ Այժմ սնանկութիւններ պատահեցին Լօնդօնում ու Վիեննայում։ «Մեծ հասարակապետութեան», «Մեծ Գամբետտայի» մինիստրութիւնը ընկաւ։ Իսկ եթէ «մարգարէի յաջորդների» կայսրութեան արժէթղթերը պահողների հսկայական կորուստներն իրականանան։ Ինչ կը լինի այն ժամանակ Պարիզում, Լօնդօնում, Վիեննայում, Բեռլինում, Ամստերդամում և Վատիկանում։

Այո, լաւ կը լինի, այո, ուրախալի կը լինի։

Թարգմ. ռուս. Misantrop

ներ կարելի է կատարել փողոցում քայլելու ժամանակ:

Միտքը մի կարեւոր դեր է կատարում մարմնի օրգանները գրգռելում, որ նրանք կատարեն իրանց կանոնաւոր ֆունկցիաները: Հետեւաբար, մենք պէտք է միացնենք խոր շունչ առնելու վարժութիւններին մեր միտքը և պէտք է բռնենք մեր մտքում մօտաւորապէս հետեւեալ ինքնաներշնչումը. «Այս թարմ օդը, որ ես շնչում եմ, պարունակում է իր մէջ երիտասարդացնելու, բուժելու և զօրեղացնելու ոյժ: Նա լցւում է իմ ամբողջ սիստէմի մէջ և դուրս է վանում մարմնից բոլոր ոչ-փափագելի դրութիւնները: Նա բերում է ինձ առողջութիւն, հանգիստ քուն և մաքուր արիւն: Նա մաքրում է իմ միտքը, նոյնպէս ինձ ոյժ է տալիս անելու և ունենալու, ինչ որ ես ցանկանում եմ»:

Այս ինքնաներշնչումները պիտի տալ խոր համոզմունքով, նրանց չը պէտք է արտասանել թութակի նման, այլ պէտք է զգալ ձեր մտքի խորքութիւնից:

Արդ, եթէ տառապում էք մի որեւէ հիւանդութիւնից, գործածէք այս խոր շունչ առնելու մեթօդները ամեն օր, օրական երեք անգամ: Եւ շարունակեցէք նոյն վարժութիւնները մինչեւ վեց շաբաթ, և դուք ինքներդ պիտի զգաք նրա կարեւորութիւնը և օգտակարութիւնը:

Խոր շունչ առնելիս՝ խորապէս հաւատ ունեցէք նրանից առաջ գալիք արդիւնքին: Այդ հաւատը պիտի լինի գիտակցական, ոչ թէ մի կոյր հաւատ: Երբ ձեր հաւատը թոյլ, մակերեւոյթային լինի, նա չի հասնի նպատակին կամ ուրիշ խօսքով՝ ձեր գիտակցական միտքը եթէ չը դիպչի ձեր ենթագիտակցական մտքին, ձեր փորձերը պիտի վրիպեն:

Պէտք է ամենքի համար պարզ լինի, որ ենթագիտակցութիւնը ուղղութիւն է ստանում մեր գիտակցական մտքից, լինի այդ ուղղութիւնը գիտակցաբար թէ անգիտակցաբար. ենթագիտակցութիւնը հնազանդում և գործում է տրուած ուղղութեան համաձայն:

Եթէ խոր շունչ առնելիս դուք գիտակցաբար ուղղութիւն տաք ձեր ենթագիտակցութեանը և ձեր մտքում դուք տեսնէք ձեր մարմինը առողջ, նա կը սկսի գործել այդ ուղղութեամբ և աւելի կը ճոխացնէ, կը մեծացնէ, կը խոշորացնէ ձեր առողջութիւնը:

Ենթագիտակցական միտքը այն միտքն է, որ կառավարում է մարմնի և օրգանների բոլոր ֆունկցիաները, երբ մեր գիտակցութիւնը քնած է: Մեր միտքը ոյժ ունի մեզ առողջացնելու, եթէ մենք գիտենանք պատշաճաւոր կերպով դիմել կամ ուղղութիւն տալ մեր ենթագիտակցական մտքին: Ենթագիտակցութիւնը կընդունի ամեն տպաւորութիւն, որ նա կը ստանայ գիտակցական մտքից. հետեւաբար, գիտական է, և մենք ամենքս պէտք է լիուլի ծանօթութիւն ունենանք մեր մտաւոր կարողութիւնների մասին, որպէս զի կարողանանք գործադրել և գործածել մեր սեփական զօրութիւնները մեր ամենօրեայ կեանքում:

Մենք պիտի խօսենք մի ուրիշ գիտակցական մտքի մասին ընդարձակօրէն. միայն պէտք ենք զգում աւելացնել այս յօդուածին հետեւեալ խորհուրդը: Տուէք ուղղութիւն, գիտակցաբար, ձեր ենթագիտակցութեան, երբ խոր շունչ էք առնում, երբ ձեր մկանունքը զարգացնելու համար մարմնամարզութիւններ էք կատարում. առանց մտքի կամ խորհրդի կատարուած մարմնամարզութիւնները կամ խոր շնչելը չէ կարող տալ այնպիսի զգալի օգուտ, ինչպէս եթէ վարժութիւններին միացնէիք նաև ձեր ինքնաներշնչումները:

Յարութիւն Շէքէրջեան

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) «Ծաճար» շաբաթաթերթի № № 37, 38, 39, 40, 41, 42, 43 և 44, Կ. Պոլիս. 1912 թ.: 2) «Կոչնակ» շաբաթաթերթի №№ 41, 42, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51 և 52, Նիւ-Եօրկ, 1912 թ.: 3) «Հուսանք» շաբաթաթերթի № № 30, 31 և 32, Կահիրէ, 1912 թ.: 4) «Նոր-Դպրոց» շաբաթաթերթի №№ 27—28, 29—32 և 33—36, Թիֆլիս, 1912 թ.: 5) «Աւետաբեր» շաբաթաթերթի № № 42, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50 և 51, Կ. Պոլիս, 1912 թ.: 6) «Նոր-Առողջապահիկ» երկշաբաթաթերթի № № 15, 16, 17, 18 և 19, Թիֆլիս, 1912 թ.: 7) «Մարմնամարզ» երկշաբաթաթերթի № № 18, 19 և 20, Կ. Պոլիս, 1912 թ.: 8) «Շանթ» կիսամսեայ հանդէսի № 29, Կ. Պոլիս, 1912 թ.: 9) «Թատրոն և Երաժշտութիւն» պատկերազարդ հանդէսի № 11, Բագու, 1912 թ.: 10) «Տարազ» պատկերազարդ հանդէսի №№ 11 և 12, Թիֆլիս, 1912 թ.: 11) «Աղբիւր» մանկ. ամսագրի №№ 11 և 12, Թիֆլիս, 1912 թ.: 12) «Արարատ» ամսագրի № № 9, 10—11 և 12, Էջմիածին, 1912 թ.: 13) «Հանդէս Ամսօրեայ» № № 11 և 12, Վիէննա, 1912 թ.: 14) «Բազմավէպ» ամսագրի № № 7—8—9 և 10—11, Վենետիկ, 1912 թ.: 15) «Միութիւն» ամսագրի № № 8, 9, 10 և 11, Կահիրէ, 1912 թ.: 16) «Հասկեր» մանկական ամսագրի № № 10, 11 և 12, Թիֆլիս, 1912 թ.: 17) «Վերածնունդ» ամսաթերթի № № 5 և 6, Կ. Պոլիս, 1912 թ.: 18) «Armenia» ամսագրի նոյեմբերի համարը, Նիւ-Եօրկ, 1912 թ.: 19) «Mècheroutiette» ամսագրի № 37, Պարիզ, 1912 թ.: 20) «Հայ գրականութիւն» ամսաթերթի № № 2, 3 և 4, Զմիւռնիա, 1912 թ.: 21) «Ղարադաղ» ամսաթերթի № 5, Թաւրիզ, 1912 թ.:

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը տեղեկութիւններ ունի, որ Այբէթում սկսվել է հայկական կոտորած:

◆ Չաթալջայի դիրքերի վրա սկսվել է կռիւ:

◆ Բոլգար և սերբ զօրքերը միացեալ ոյժերով վճռական ռմբակոծութիւն են սկսել Ադրիանուպոլսի դէմ:

◆ Կ. Պոլսում կազմված թիւրքական մասնաժողովը որոշում կայացրեց՝ երբ Ռումէլիայի մահմեդականները ենթարկվում են հայերի հալածանքներին, որոնք վրէժ են լուծում Ասիայում գտնվող իրանց ազգակիցների փոխարէն:

◆ Կ. Պոլսից «H. B.»-ի թղթակիցը հեռագրում է, որ Գերմանիան զինում է Թիւրքիային:

◆ Թիւրքաց մեծ վէզիր Մահմուդ-Շեվքէթ-փաշան վստահեցրեց սուլթանին, թէ ժողովրդի և զօրքի մէջ տիրում է լիակատար համաձայնութիւն և սուլթանին ոչ մի վտանգ չէ սպառնում: Մինչդեռ վերջին հեռագիրները տեղեկացնում են, որ նոր հեղաշրջումը Կ. Պոլսում անխուսափելի է:

◆ Չը նայած գերմանական կայսրուհու խնդրին, բոլգարները թոյլ չը տուին գերմանական Կարմիր Խաչին մտնել Ադրիանուպոլիս:

◆ «Berl. Tag.»-ը տպել է Կրիսպիի չը հրատարակված յիշողութիւններից կտորներ, որ վերաբերում են Կրիսպիի և Բիսմարկի խօսակցութեանը արեւելեան հարցի մասին: «Չը պէտք է արգելել Ռուսաստանին,—ասել է Բիսմարկը,—գնալ դէպի Կ. Պոլիս: Այժմ նա ուժեղ է, սակայն Կ. Պոլիսը կը թուլացնէ նրան»:

◆ «H. B.»-ի թղթակիցը հեռագրում է, որ Համադանի և Քիրմանշահի միջև ընկած բոլոր գիւղերը ենթարկվել են Սալար-ուդ-Դովլէի ասպատակութեան:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս ձրի դեղատոմսը նշանակալից է:

ԵՍ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԷՍ ԱԶԱՏՎԵՑԻ ԻՄ ՏԱՆՋԱՆՔՆԵՐԻՑ.

Ես պէտք է տպագրութեան տամ, այլոց օգտի համար, այդ ձրի դեղատոմսը, որը ինձ բժշկել է ունեցածս տանջանքներից: Իմ ցաւերը այնքան սարսափելի էին, որ ես շաբաթներով չէի քնում, և առաջին անգամը, երբ ես ընդունեցի այդ դեղը, քնեցի անընդհատ 8 ժամ: Այժմ ես ազատված եմ ունեցածս իշիաս հիւանդութիւնից և գոտկատեղի ցաւերից, իսկ իմ կինը ազատվել է իր ունեցած սարսափելի գլխացաւից: Այդ ուղղակի նշանակալից է: Ահա դեղատոմսը կէտ առ կէտ, որը ես կտրել եմ լրագրից: Ձեզանից մօտ գտնվող դեղավաճառանոցից խնդրեք 60 գրան Կեֆալդօլ-Ստօր տաբլէտկաներում: Երկու տաբլէտկա ընդունելուց իսկոյն ցաւերը հանգստանում են, լինեն նրանք մրսածութեան թէ յօդացաւի հետեւանք:

(П. 3870) (№ 7)

Լոյս տեսան
Ե. ԼԱԼԱՅԵԱՆԻ
ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ
աշխատութեան հետեւեալ մասերը.

1) «Ազգագրութիւն» . . . — 60 կ.
2) «Նշանաւոր վանքեր» . . — 60 կ.
3) «Բանահիւսութիւն» . . 1 ր. —
4) «Լուսանկար ալբոմ», I Վանայ շրջան 60 ր. —
5) » II Հաքեարի շրջան 60 ր. —
6) «Միսական կարգերը հայոց մէջ» — 25 կ.

Հասցէն՝ Лермонтовская № 1. Тифлисъ.
(Հ. Կ.) 63. 4—1

Ոսկէ Մեդալ Լօնդօն 1893 թ.

Զգուշացէք կեղծիքներից!
ՊՐՈՎԻԶՕՐ
Г. Ф. Юргенсъ-ի
Բօրնօ-Տիմօլեան Սապօն
Քրտինքի, պզուկների, պէպէնների, ուզրենների, պզուկների և դէմքի խալերի դէմ:
ՏՈՒԱԼԷՏԱՅԻՆ ԱՆՈՒՇԱՀՈՏ ՍԱՊՕՆ ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ.
Վաճառվում է ամենուրեք:
1 կտորը 50 կոպէկ, 1/2 կտորը 30 կոպէկ:
(Կ.) (M. 50331) 24—1

Գլխաւոր պահեստ՝ Москва, Г. Ф. Юргенсъ.

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
վաճառվում են.

ՄԻՐԻՃԱՆԵԱՆ. «Լքեալ ընտանիք», դրամա . . — 40 կ.
ՄԿՐՏՈՒՄԵԱՆ. «Ջրկվածները», պատմուածներ . . — 50 կ.
ՄՈՒՐԱԴԵԱՆ. «Սէֆիլս» — 80 կ.
ԴԱՂԲԱՇԵԱՆ. «Լիակատար բառարան ռուսերէնից հայերէն», կազմած . . . 9 ր. —
ԴԵՄԻՐՃԵԱՆ. «Ուխտաւորներ» — 7 կ.
ԴԵՄՈՒՐԵԱՆ. «Քնար ձայնագրեալ երգարան» . 1 ր. —
ԴԻԿԿԵՆՍ. «Դաւիթ Կօպպերֆիլդ» I, II և III հ. միասին 2 ր. 25 կ.
ԴՕԴԷ ԱԼՖՕՆՍ. «Եւանգելինա և Կօմպարի դատաւորի տեսիլը» — 20 կ.
ԵԿՄԱԼԵԱՆ. «Երգեցողութիւն սրբոյ պատարագի» . 8 ր. —
» Արական խոնարհ ձայն «Բաս» 2 ր. —
» » բարձր ձայն «Տենօր» 2 ր. —
» Իգական խոնարհ ձայն «Ալտ» 1 ր. 50 կ.
» » բարձր ձայն «Սոպրանօ» 1 ր. 50 կ.

Միևնոյն գրատանը վաճառվում են հրապարակում լոյս տեսած հայերէն և օտար լեզուներով նոր գրքեր: Պատուէրները կատարվում են արագ:

Դիմել՝ Тифлисъ, Центральной Книжной Торговлѣ. 67. 1—1

Լոյս տեսաւ և վաճառվում է
ԳԷՈՐԳ Ք. ՄԿՐՏՈՒՄԵԱՆԻ
ՋՐԿՎԱԾՆԵՐԸ
Գինն է 50 կոպ.

Դիմել՝ «Գուտտենբերգ», «Գիր», «Կենտրոնական» գրավաճառանոցներին և հեղինակին՝ Астрахань, Григоріанская ул. д. № 15.
(Ե.Հ.Կ.) 11. 10—9

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների: Ելեկտրաբուժութիւն:
Ընդունելութիւնը ամեն օր 12 1/2—2 ժ. ցերեկվայ: 5—7 ժ. երեկոյեան: Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.
Սօլօլակ, Բէբուտովսկայա, № 33 (անկյուն Պասկեվիչի փողոցի): Տէլէֆօն № 1175.
(Հ. Կ.) 377. 100—65

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Նիկ. Աբրահամեանի
հետեւեալ հրատարակութիւնները.

I
ՁԵՌՆԱՐԿ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՀԱՇՒԱՊԱՀՈՒԹԵԱՆ.
երկտ., կոլոնիալ, բանկ. և բամբակէ ապրանքների (առաջին անգամն է, որ լոյս է տեսնում հայերէն լեզուով), գինն է 2 ռուբ.:

II
Руководство торг. бухгалтеріи
въ связи съ керосинозав. производствомъ (2 допол. и исправл. изд.) Ц. 2 р. 50 к.

III
Таблица вычисл. процентовъ
отъ 1 до 360 дн. отъ 1/4 до 12% и на всѣ капиталы отъ 1 до 10,000 р. (2 изд.) Ц. 85 к.

IV
Журнальныя статьи
для опредѣл. дебета и кредита. Ц. 75 к.

V
Общедоступная справочн. книжка
для слушателей и слушательницъ бухгалтерск. курсовъ и занимающихся конторскими дѣлами. Ц. 30 к.

Հեղինակի մօտ՝ Бухг. курсы Н. В. Абраамяна, Николаевская 22 և գրավաճառանոցներում:
(Ու.Հ.Կ.) 939. 20—19

Գ. ԳՈՐՆԻԳ
Գոլովինեան պր. 11, զինուորա-պատմական մուզէումի մօտ:


Г. ГОРНИГЪ
ОПТИКЪ-СПЕЦІАЛИСТЪ
СУЩ. СЪ 1873 г.
СПЕЦ.: ОКУЛИСТ. ОПТИКА. ЕДИНСТ. НА КАВКАЗѢ ШЛИФОВАЛЬНЯ ОПТИЧЕСКИХЪ СТЕКОЛЪ
БИНОКЛИ ДЛЯ ТЕАТРА, ПОЛЯ И МОРЯ ВСѢХЪ ЛУЧШИХЪ СИСТЕМЪ И ФАБРИКЪ.
ГОЛОВИНСК. ПР. 11 ОКОЛО ВОЕННО-ИСТ. МУЗЕЯ.

[illegible]
(Հ. Կ.) 38. 10—3

Լոյս տեսաւ եւ վաճառվում է
„ՍԱՍՈՒՆԸ ԱՅՐՎՈՒՄ Է“
շքեղ գունաւոր պատկեր 11×15 վերշոկ կամ 49×67 սանտ. մեծութեամբ: ՊԱՏԿԵՐԸ պատրաստված է 12 ներկով և կազմում է դահլիճի շքեղ զարդարանք: Գինը, հասարակութեանը մատչելի անելու համար, նշանակված է հատին 50 կ.: Գումարով գնողներին զեղչ և ճանապարհածախսը մեզ վրայ: Տպված է սահմանափակ քանակութեամբ:
Դիմել՝ Тифлисъ, Гоголевская ул. № 57, Ованесу Мкртумянцу.
(Կ.Հ.) 12. 5—5

Թիֆլիսի Առեւտրական Նաւթարդիւնաբերական Ընկերութեան Վարչութիւնը
սրանով խնդրում է պ. պ. բաժնետէրերին ներկայ լինել
ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ,
որ տեղի կունենայ ներկայ 1913 թ. փետրվարի 10-ին, առաւօտեան ժամը 11-ին, Թիֆլիսի Բօրսայի շինութեան մէջ (Պուշկինսկի փող. № 5):

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ.

1) Վարչութեան զեկուցումը.
2) Վարչութեան զեկուցումից առաջացող հարցերի վճիռը.
3) Վերստուգող յանձնաժողովի զեկուցումը.
4) Քննութիւն և հաստատութիւն 1912 թ. հաշւի և հաշւեկշռի.
5) 1913 թուի ծախսերի նախահաշիւը և գործունէութեան նախագիծը.
6) Կարգաւորումն 1912 թ. օգուտների.
7) Վարչութեան մէկ անդամի ընտրութիւն՝ ի տեղի հերթով հեռացող անդամի, և վարչութեան մէկ անդամի թեկնածուի ընտրութիւն.
8) Վերստուգող յանձնաժողովի 5 անդամների ընտրութիւն.

Եթէ ընդհանուր ժողովը չը կայանայ պահանջված ձայների թւի պակասութեան պատճառով, այդ դէպքում երկրորդ ժողովը կը նշանակվի փետրվարի 24-ին 1913 թ. նոյն տեղում, առաւօտեան ժամը 11-ին, որպիսի ժողովը կը համարվի օրինական՝ որքան անդամ էլ ներկայ լինի:

Վարչութիւնը պ. պ. բաժնետէրերի ուշադրութիւնն է հրաւիրում Ընկերութեան կանոնադրութեան § 59-ի վրա:

Անուանական ակցիաների տէրերը օգտվում են Ընդհանուր Ժողովում ձայների իրաւունքով միայն այն դէպքում, եթէ նրանք՝ գոնէ 7 օր առաջ մինչև Ընդհանուր Ժողովի օրը՝ մտցված են վարչութեան մատեանների մէջ, որի համար և Ընդհանուր Ժողովին մասնակցելիս չէ պահանջվում ներկայացնել անուանական ակցիաները:

Ակցիաները ներկայացնողին ձայնի իրաւունք է տրվում այն դէպքում, եթէ նոյն ակցիաները ներկայացված են Ընկերութեան վարչութեանը՝ գոնէ եօթն օր առաջ մինչև Ընդհանուր Ժողովի օրը և յետ տրված մինչև Ժողովի աւարտը: Բնագիր-ակցիաների փոխարէն կարելի է ներկայացնել վկայագրեր (ստացագրեր) ակցիաները ի պահեստ կամ գրաւ դրված լինելու համար ինչպէս պետական, նոյնպէս և կառավարութեան հաստատած կանոնների հիման վրա գործող կրէդիտային (տեղական և օտար քաղաքների) հիմնարկութիւնների, այլ և արտասահմանեան կրէդիտային հիմնարկութիւնների և բանկային տների կողմից ստացված, որոնք ընտրված կը լինեն բաժնետէրերի Ընդհանուր Ժողովներից և հաւանութիւն գտած ֆինանսների մինիստրութիւնից: Վկայագրերի մէջ պէտք է նշանակված լինեն ակցիաների համարները: Արտասահմանեան բանկային հիմնարկութիւնները, որոնց վկայագրերը կարելի է ներկայացնել փոխարէն բնագիր-ակցիաների, պէտք է նշանակված լինեն Ընդհանուր Ժողովի հրաւէր-յայտարարութիւնների մէջ:

Միաժամանակ վարչութիւնը վաղօրօք յայտնում է պ. պ. բաժնետէրերին, որ ձայնի իրաւունք ունենալու համար տրված հաւատարմագրերը և գրաւոր յայտագրերը պէտք է ներկայացված լինեն վարչութեանը բաժնետէրերի Ընդհանուր Ժողովից 7 օր առաջ, Ընկ. վարչութեան գրասենեակին՝ ցեր. ժամը 11—1-ը:

(27. փ. 7) 34. 3—2

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայլեան պր. 24/2. Տէլէֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առեւտրական կրթութիւն:
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատեստատներ:

Գործնական պարապմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձեւով կազմակերպված Muster-Comptoir-ում: Նիւթերն առնվում են ռէալ կեանքից: Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առեւտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առեւտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առեւտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն). բ.) ոչ-պարտադիր. 1) **Օտար լեզուներ.** 2) Սղագրութիւն. 3) Դակտիլօգրաֆիա (ռեմինգտօն և այլ. և 4) Առեւտր. թղթակցութիւն օտար լեզուներով: Պարապմունքները կատարվում են և զատ-զատ: Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար: Ունկնդիրների թիւը սահմանափակված է: Պարապմունքների սկիզբը յունվարի 15-ին: Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը: Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում: Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշւապահներ, օգնականներ և առեւտր. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից: (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 228 ունկնդիր, որոնցից 42 հոգի իգական սեռից):

Կուրսերի հիմնադիր՝ առեւտր. գիտութեան կանդիդատ՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(Ա. Ե.) 876. 0—38

Открыта подписка на 1913 годъ.
Самый дешевый, ежемѣсячный, доступный широкой массѣ читателей, издающійся ШЕСТОЙ ГОДЪ
НОВЫЙ
ЖУРНАЛЪ ДЛЯ ВСѢХЪ
2 РУБ. 20 К. ВЪ ГОДЪ.

Краткій перечень сотрудниковъ беллетр. отд.: Леонидъ Андреевъ, М. Арцыбашевъ, И. Бунинъ, В. Вересаевъ, О. Дымовъ, Б. Зайцевъ, А. Купринъ, С. Кондурушкинъ, О. Миртовъ, В. Муйжель, И. Потапенко, А. Серафимовичъ, гр. А. Толстой, Танъ, Е. Чириковъ, С. Юшкевичъ, и др.; научно-попул. и критич. отд.: проф. Е. Аничковъ, П. Берлинъ, прив.-доц. А. Генкель, проф. С. Венгеровъ, Л. Клейнбортъ, Е. Колтоновская, Н. Лернеръ, А. Луначарскій, Н. Рубакинъ, акад. Д. Овсянико-Куликовскій, проф. И. Озеровъ, проф. В. Сперанскій, проф. Е. Тарле, пр. М. Туганъ-Барановскій, М. Энгельгардтъ, К. Чуковскій и др.

НА 1913 ГОДЪ ПОДПИСЧИКИ ПОЛУЧАТЪ:

12 книгъ журнала, содержащихъ повѣсти, разсказы, стих., статьи по вопросамъ науки, искусства, самообразованія, педагогики, исторіи, рецензіи о новыхъ книгахъ и проч.
6 книгъ безплатн. прилож., по 128 стр. каждая, въ которыхъ будутъ даны произведенія современ. извѣстныхъ иностранныхъ писателей: Уптона Синклера, Власко Ибаньеса, Каринъ Михаэлисъ, Як. Вассерманна и др.
12 картинъ безпл. приложенія въ три краски, на веленевой бумагѣ: снимки съ картинъ извѣстныхъ художниковъ и портреты писателей. Размѣръ каждой картины—форматъ страницы журнала.

ПОДПИСНАЯ ЦѢНА: 2 р. 20 к. въ годъ и 1 р. 20 к. въ полгода.
Подробные проспекты со списк. сотрудниковъ безпл. Пробные №№ за двѣ 7-коп. марки. Подписка во всѣхъ книжныхъ магазинахъ и почтов. отдѣл. Имперіи. Всѣ обязательства за 1912 г. выполнены.
АДРЕСЪ ДЛЯ ПЕРЕВОДОВЪ: С.-Петербургъ, Владимірскій пр., 19.
„Новый Журналъ для Всѣхъ“. Ред.-изд. И. М. Розенфельдъ.

Открыта подписка на 1913 годъ.
На самый дешевый изъ толстыхъ ежемѣс. журн., до 300 стр. убористаго шрифта, при участіи лучш. литературн. силъ. 4-ый годъ изданія.
НОВАЯ ЖИЗНЬ
4 р. 90 к. безъ прилож.
7 р. 20 к. съ 12 кн. прилож.

Краткій перечень сотрудниковъ беллетр. отд.: Леонидъ Андреевъ, М. Арцыбашевъ, Д. Айзманъ И. Бунинъ, В. Вересаевъ, З. Гиппіусъ, С. Городецкій, Д. Мережковскій, О. Дымовъ, Бор. Зайцевъ, А. Купринъ, О. Миртовъ, В. Муйжель, С. Сергѣевъ-Ценскій, Ѳедоръ Сологубъ, гр. А. Н. Толстой, Танъ, Е. Чириковъ, С. Юшкевичъ и др. Обществ.-полит., критич. и научн. отд.: проф. Е. Аничковъ, Ю. Айхенвальдъ, В. Агафоновъ, П. Берлинъ, С. Венгеровъ, Л. Клейнбортъ, Антонъ Крайній, А. Луначарскій, Л. Мартовъ, Н. Рубакинъ, проф. М. Туганъ-Барановскій, К. Чуковскій, М. Энгельгардтъ, П. Юшкевичъ и др.

НА 1913 ГОДЪ ПОДПИСЧИКИ ПОЛУЧАТЪ:

12 книгъ журнала, въ которыхъ будутъ напечатаны романы: А. Крандіевской, И. Потапенко, фантаст. ром. Н. Березина, новѣйшіе романы выдающ. иностран. писат., повѣсти, разсказы, статьи по вопрос. литер., науки, искусства, общ.-полит. и проч.
12 книгъ безпл. прил. полн. собр. соч. попул. америк. беллетр., въ единств. авторизов. пер. I. А. Маевскаго, съ біогр. и портрет., **Джека Лондона** стоющ. въ отд. продажѣ—16 р. 12 книгъ сост. свыше 3840 стран. текста.

ЦѢНА: на 1 годъ—7 р. 20 к. на полгода—4 р.
(Разср.: 3 р.—при подп., 2 р. 20 к.—1 марта и 2 р.—1 іюля).
Безъ прилож.: на 1 годъ—4 р. 90 к., на полгода—2 р. 70 к. (Разср.: 3 р. при подп. и 1 р. 90 к.—1 іюля).

СОВМѢСТНАЯ ПОДПИСКА
на „Новый Журн. для Всѣхъ“ и „Новую Жизнь“ (съ прилож.) на 1 годъ—9 р. (Разср. 4 р.—при подп., 3 р.—1 мар. и 2 р. 1 іюл.). На „Нов. Журн. для Всѣхъ“ (съ прил.) и „Новую Жизнь“ (безъ прил.) на 1 г. 6 р. 60 к. (Разср.: 3 р. при подп., 2 р.— 1 мар. и 1 р. 60 к.— 1 іюл.). Подробн. просп.—безплатно. Пробные №№ за двѣ 7-ми коп. марки. Всѣ обязательства за 1912 выполнены. Подп. принимается во всѣхъ книжн. магазинахъ и почтов. отдѣл. Имперіи.
АДРЕСЪ ДЛЯ ПЕРЕВОДОВЪ: С.-Петербургъ, Владимірскій, 19.
К-ра журн. „Новая Жизнь“. Ред.-Изд. И. М. Розенфельдъ.

Въ Тифлисѣ подписка принимается въ книжн. магазинахъ: Г. И. Галустянца, П. Теръ-Исраельянца, А. Б. Хидденеля, гдѣ можно видѣть образ. прилож.—соч. ДЖ. ЛОНДОНА.

874. 10—10

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный